

Կ. Համբարձում
Փարսիսի ցուցանիշ
1400 1909թ.

891.99

Կ-26

Արժույթի Գործիքներ

NOV 2017

891-39

L-26

Վ. ՎԱՍԱԿՈՒՆԻ - Խ

8/11/09/4-27

4-27

3464

ԿԱՐՄԻ ՔԱԶԱՆԻ ՈՐՁԸ

ԵՐԼԴԸՔ ՔԵՑԵԿ

ՄԻ ԴՐՈՒԱԳ ԱՐԴԻԻԼ-ՀԱՄԻՏ ԲԻ ԿԵԱՆՔԻՑ

17502

Центральная библиотека имени Ленина

ИНВЕНТАРНЫЙ № 1936 г.

№

Հրապարակված է
Ս. Ն. ՄԱՐԿԱՆ. ԲՆԿ.
2 Լ. II. 1914
Библиот. Читальн.
Бак. Арм. Чолов. О-ва

Վ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏԱՐՆ Յ. ԳՐԵԼՃԱՆՆ

Չարմարճըր Թիւ 25

1909


06 APR 2013

56.792

4087

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 14



1803
41

ՅԱՌԱԶԱԲԱՆԻ ՏԵՂ

Ինչպես «Սաբիրե»-ն, նույնպես էլ «Կարմիր Գազանի Որջը» պատմական վեպ է, այնպես որ սոյն գրուած-
քում էլ մեկն երբեմն վիպականը զոհեղ ենք պատմա-
կանին, պատմականն էլ զոհեղ ենք վիպականին, ինչպես
այդ արեղ ենք «Սաբիրե»ում: «Կարմիր Գազանի Որջը»
«Սաբիրե»ի շարունակութիւնն է:

Վ. ՎԱՍՍԱԿՈՒՆԻ

Կ. Պոլիս, Մայիս

ԿԱՐՄԻՐ ԳԱԶԱՆԻ ՈՐՋԸ

(ԵԸԼԴԸԶ ՔԷՕՇԿ)

Ա .

Բէշիքթաշի և Օրթաքէօյի բարձրութիւնների վրայ տարածուած խառնիճաղանձ շէնքերի անճաշուկ հաւաքածոն, որ նայում է մի կողմից Չամլըճայի սարերին ու Իւսկիւտարի ամփիթատրոնաձև շէնքերին, երկրորդ կողմից Սթամպուլին, երրորդ կողմից Պերային, իսկ չորրորդ կողմից հրաշալի Վափարկն ու նրա գեղեցիկ ափերին, երբեմն ծառերի ետև թաղցրած իր վեհերոս գլուխը, երբեմն ճակատը հաշիւ հազ ցոյց տալով՝ ապրում է մի անբնական ու խելացեղ կեանք։ Դարերի ընթացքում ոչ մի պալատ, ո՛չ մի արքունիք դեռ այնպէս կտրւած չէ եղել աշխարհից, որպէս է Կարմիր Գազանի որջը, արքունիքը, աւելի ճիշդ բառով, այդ գազանի ստեղծած աշխարհը, որ նոյնքան աւելի հարուստ է, որքան աղքատ է այն երկիրը, որի կառավարութիւնը յանձնուած է այդ հարուստ պալատներում որջուցած աշխարհի երեսին գտնուող ամեն արարածներից ամենավախոտ գազանին, որ հաստ պարիսպների ու կրծնական զգացումներով ու ներշնչումներով այլանդակած գինւորների յետև թաղնւած ապրում է, չնչում, չարժում, բանանում, սպանում, հալածում, ոչնչացնում, իսկ երբէք երբէք չի չինում կամ ստեղծում։

Մի ընդարձակ աշխարհ է Կարմիր Գազանի որջը, մի ահագին բազմութիւն է նրա կամակատարների ու ստրուկների վոհմակը, որոնք իրենց տիրոջ չափ արիւնքուտ, իրենց տիրոջ հաւատարմ՝ ներշնչում են նրան աւելի շատ վայրագութիւն ու գազանութիւն, որքան պէտք է իրենց հակառակորդներին տապալելու ու մի ամբողջ երկիր մտանկացնելու, կողոպտելու ու այդ երկրին ամենաաղնիւ գաւազներին սպաննելու, կոխելու, բանտարկելու, աքսորելու, գանակոծելու համար։ Օրթաքէօյի ու Բէշիքթաշի բարձունքների վրայ տարածուող որջը մեծ ու փոքր հարիւրաւոր գազանների է անուցանում, որոնց թւում և՛ մեծ Գազանին, Կարմիր Հիւնքեարին, Աքղիւ-Համիտ Բ.ին։

Սեպտեմբերեան մի շատ գեղեցիկ օր, առաւօտ վաղ, Երվըզի բնակիչները զարթնեցին ինչ որ փախուքով: Առհասարակ գազանները այդ որջում կեանքը սկսում էր վաղ առաւօտից և գրեթէ չէր դադարում ամբողջ 24 ժամ, իսկ այդ առաւօտը մարդիկ աւելի վաղ զարթնեցին, զարթնեցին և սկսեցին իրար ականջի փախալ շատ զգոյշ, միմիանցից քաշւելով, միմեանց վրայ կասկածելով, իրար հազիւ լսելի անելով իրենց խօսակիցներին: Ասենք, այդտեղ, այդ գաղանցում, ամեն օր մարդիկ զարթնում էին փախուցով և ամեն օր նրանք քաշւում էին իրարից իրար հետ խօսելիս, սակայն այդ օրը մի քիչ աւելի էին իրար անցել նրանք, որոնք երբէք իրար չէին անցնում՝ նոյն իսկ երբ աշխարհի մէջ կատարւում էին նշանաւոր դէպքեր յաճախ և՛ բոլորովին էլ չէին հետաքրքրւում այդ նշանաւոր դէպքերով:

Ինչ էր պատահել, ինչու էին իրար ականջի փախում Երվըզի բնակիչները, այն էլ այդքան շատ ու յաճախ ու այդքան վաղ սովորականից:

Որպէս մի ուռմբ պայթել էր Երվըզի գլխին այն լուրը, թէ Պօլսում կատարւած հայկական ջարդերի պատճառով անգլիական նաւատորմիւր մօտեցել է Տարտանսիլին և թէ գիշերը Կարմիր Գազանի նախագահութեան տակ գումարւած նախարարական մի ժողովում Դէլի-Ֆուսատ փաշան կրկին և կրկին պնդել էր, որ Տարտանսիլը չի գիմանալ որ և է քիչ թէ շատ ուժեղ նաւատորմի յարձակումներին:

Աբդուլ-Համիտ Բ. հրամայել էր իսկոյն լռեցնել ճշմարտախօս իր ծառային, թէ և յետոյ կարգադրել էր միայն արտաքսել նրան իր պալատից, մանաւանդ նրան լռեցնելու համար ժամանակ վառնելու տեղ պալատան բաղմաթիւ գահիճները կարող էին աւելի ամբողջել իր պալատը և իր սիրելի ու հաւատարիմ սենեկապանները կարող էին աւելի շուտ պատրաստել իր իրեղէնները, որ իրեն պէտք պիտի գային իր փախուստի ժամանակ:

Այդ մարդը, որ տառնեակ հաղարաւոր մարդկանցով չըջապատւած, հաղարաւոր սուլիների յետեւ քաջաբար պաշտպանուած կոտորել էր ու իր կամայականութեանց զոհ դարձրել մի ամբողջ ժողովուրդ, որպէս մի նապաստակ պատրաստւում էր թողնել տարիներ շարունակ իր ոճիրների վայրը կողմ իր որջը «սուտ հրդեհից վախեցած», որպէս շատ գեղեցիկ կերպով բացատրել է անգլիացի հանձարեղ ողբերգակը:

Ամբողջ գիշերը պատրաստութիւններ էին տեսնում, Աբդուլ-Համիտ իր զբաղմունքն ու պայտասկները լեցրել էր բանկային թրդ-թերով ու ոսկեայ դրամներով, բաղմաթիւ արկղեր թանկագին քա-

րերով ու ոսկեայ դարձերով լիքը՝ կապուած պատրաստ էին փոխադրութեան համար: Պալատականները դեռ կապկպում էին ուրիշ իրեղէններ, որ նրան պէտք պիտի գային իր փախուստի ժամանակ: Կանանցում արդէն սկսել էր արտասուք ու աղմուկ, որ մայրկայսրուհու, իր խորթ որդուց աւելի գազան այդ հրէշի բռնապետական դաւաղանի հարւածների շնորհիւ հազիւ էր արտայայտւում այնքան մեղմօրէն, որ մինչև վախտակների լսողութեանը չէր հասնում: Տառնեակ հաղարաւոր զինուորները հաւատարիմ սպաների հրամանի ներքոյ կազմ ու պատրաստ սպասում էին դիմագրաւելու ամեն մի կարելի յարձակման:

Ահաղին պալատի մէջ, ահաղին բաղմութեամբ չըջապատւած Մեծ Գազանը ինքնիրան զգում էր միակ ու անպաշտպան և առանձնացած իր դիտարանում անհամբեր դիտում էր իր չուրջը, պալատի պատերից դուրս կատարուածները, մերթ նայում էր Չամլըճայի բարձունքներին ստուգելու համար, թէ արդեօք կայսերազուն իշխաններին չի չըջապատւում իր բռնապետութիւնից՝ ազատելու յոյս ունեցող ժողովուրդը, նայում էր իր պաշտպանութեան համար չինուած զօրանոցներին, թէ արդեօք նրանք չեն ուղղել թնդանօթները դէպի իր պալատը և վերջապէս նայում էր Մարմարայի կողմը Պօլսոյ իրարու վրայ անհոգօրէն թափւած չէնքերի յետեւ նկատելու համար մի ծինելոյդ, մի կայմ, որ հաստատէր, թէ անգլիացիք մօտենում են: Եւ իր այդ սպասողական դրութեան մէջ նա սպասում էր քնած քաղաքին, որ լուռ էր ու հանդարտ և քնել էր հիւանդագին և ամեն մի չչուկից զարթնելու պատրաստ մի քնով, որ աւելի էր զայրացնում յուսահատ գազանին:

Նոր նոր էր արեգակը բարձրացել Սե Ծովի մակերեսովից բարձր և սկսել էր երեւալ իր ամբողջ սկաւառակով, երբ նորին գազանային վեհափառութեան յայտնեցին Մէլէկ - Հանըմի, նրա հաւատարիմ լրտեսուհու գալը: Մի վայրկեան Աբդուլ - Համիտ տատանեց նրան ընդունել, նոյն իսկ խօլ ցանկութիւն ունեցաւ նրան կախելու հրաման տալու, նա մտածեց իր սարսափի այդ բուռնին, թէ գուցէ այդ կինը, որ միշտ իրեն ամենից աւելի ճիշդ տեղեկութիւններ է բերել, այս անգամ էլ պիտի ճշդօրէն յայտնի անգլիական զորահաւորների երևումը Հայտար - փաշայի առաջ, իսկ ինքը այդպիսի բան լսել չէր կամենում, չէր կարող, ինքը դեռ սպասում էր գերմանական զեռապանատուն իր ուղարկած մարդու վերադարձին, որ այնու ամենայնիւ ուշանում էր:

Եւ ամբողջ թուրքիան սարսափեցնող այդ մարդը, որ ամենափոքր զփուարութեան հանդէպ միշտ ընկրկում էր ու անվճռական դառնում, այս անգամ էլ անվճռական դարձաւ ու յուսահատեց:

Նա դեռ գտնուում էր իր հոյակապ դիտարանի վերին յարկում մեծ դիտակիր առաջ, որտեղով նայում էր իր շրջակայքը: Նա ամբողջովին գտնառեւ էր, սովորաբար իր դեղնած դէմքը սպիտակել էր թղթի նման, իսկ արեւնարբու չարութիւն արտայայտող հայեացքը ապուշութիւն ու սարսափ էր արտայայտում միայն: Նա կանգնած էր, հագած էր սեւ բէտէնգօթ, սեւ ժիլէդ ու պանդալօնով, և այդ սեւերի մէջ նրա նիհար կազմածքը դարերէ ի վեր թաղւած մոմիայի տեսք էր ստացել: Նրա ջլուտ ձեռները անշարժ էին, միայն երբեմն շարժւում էին նրա սեւ յօնքերը, որոնք մերթ պրկւում էին, մերթ բարձրանում, մերթ ցածանում: Թուրքիայի տէրը սեպտեմբերեան այդ առաւօտին մի տխրած ու հալածւած էակ էր դարձել կորցրած արդէն առանց դրան էլ իր ունեցած քիչ վճռականութիւնը:

— Մէլէկ-Հանմը, Ձերդ Կայսերական Մեծութեան ամենահաւատարիմ աղախինը ցանկանում է Ձերդ Բարեգթութեան կարեւոր յայանութիւններ անել խոնարհաբար, կրկին գլուխ տալով կրկնեց Թուրխան-աղան, իր Ա. սենեկապետը, որի ձայնը լսւում էր կարծես գերեզմանային լուսթեան մէջ և որ աւելի շուտ սարսափ աղեկց իր սիրովը:

— Յայտնի՛ր, որ անյայտանայ այս տեղից և ուրիշ անգամ չյանդգնի ոտք դնել սոյն պալատի պարսպներից ներս...

Վճռեց վերջապէս գաղանը և դարձեալ սկսեց դիտել դիմացը, Չամլըճայի բարձունքը, այս անգամ աւելի անհանգիստ, աւելի դողդոջուն, նրան մի բոպէ թուաց, թէ իր այդ վճիռով ինքն իր մահւան վճիռը տուաւ և մի անբացատրելի, սահմակեցուցիչ սառսուռ անցաւ նրա ամբողջ մարմնով, նա զգաց նոյնիսկ անընտանի մի սառնութիւն ու սկսեց աւելի ու աւելի շատ դողալ, նրա ատամները զարնւում էին միմեանց, մազերը ցցել էին, մեծ քթի ծակերը աւելի ու աւելի լայն էին բացւում, օդը կարծես պակասեց մի բոպէ, նրա աչքերը սեւացան, սկսեց ամբողջ շէնքը պտտել իր շուրջը, դեպիւր կարծես ոտի տակ տեղի տուաւ:

Նա ընկաւ մօտակայ թիկնաթափ վրայ... և մի բոպէ նկատեց մարդասպան դաշոյններ, որ բարձրանում են իր վրայ, ձեռներ, որ կամենում են իրան խոլխոլել, նա տեսաւ կախաղաններ, որոնց վրայ հարկւաւոր մարդիկ են կախւած, բոլորն էլ իրան ծանօթ դէմքեր, իր հաւատարիմները, իր պալատականները, վէզիրները, վիշապները... նա զգաց, որ իրան էլ կամենում են կախել... իսկ այն բազմութիւնը... մարդկանց այն հակադաս կամքով, որ դիտում է իրան, ծիծաղում, հռչում, ուրախանում, որ ինքը այդպէս ընկել է, փոքրացել, ստորացել, կախաղանի դատապարտւել... ահա և մի սրիկայ, որ թքում է իր երեսին, իրան անամօթ ասում...

օգնեցէ՛ք... օգնեցէ՛ք... է՛յ, զօրքեր, սպանե՛ր, հրամանատարներ... միթէ՞ չէք տեսնում, որ ձեր տէրը ծաղրի է մտանւել, կախաղանի է դատապարտւել, է՛յ, իւլէմաներ, սօֆիթաներ, հօճանե՛ր, չէ՞ք տեսնում, որ ձեր կրօնապետի կրեւին են թքում, ձաղկում անպատուում են նրան... ստեղծ այս ինչ է... զօրքը, իր հաւատարիմ զօրաբանակն էլ է միացել իր թշնամիների հետ, քեաֆիր հայերի և ինգլիզների հետ, նոյնիսկ իրան շրջապատողները իր զօրքերն են... ահա հետզհետէ մօտենում են նրանք... արքայապաճաններ... դո՛ւք... դո՛ւք... դո՛ւք է՛ք կամենում ինձ ոչնչացնել... ո՛չ, ո՛չ... իմ հաւատարիմ հօճանները, սօֆիթաները, իւլէմաները կան, նրանք ձեզ կը բացատրեն, թէ անբռնաբարելի է օսմանեան կոյսեր, մահմետականների խալիֆայի անձը, եթէ նա նոյն իսկ ամենաստոր ոճրագործը լինի, նրանք կը հասկցնեն ձեզ, որ ձեր ոճրագործ կայսրը աւելի լաւ մարդ է քան ամենահաւատարիմ ու ամենաազնիւ ձեր հայրենակիցները... բա՛յց... սրտնք էլ ոչինչ չեն կարողանում անել, սրանք էլ են հալածւում, ինչպէս հալածւել են իւր բոլոր պալատականները... ահա և՛ կործանւում են իր պալատի պատերը, որոնց փլատակների վրայ բարձրանում ըմբոսանքը իր խայտառակութիւնը աւելի լաւ տեսնելու... օօօ՛, այդ արդէն անկարելի է... այդ ոճրագործութիւն է... ահա և՛ իր ամենազեղեցիկ կանանց են յափշտակում, այն ո՛վ է, ո՛վ է այն լպիրչը, այն սրիկան, որ իր շրթները մօտեցրել է գեղեցիկ, շատ ու շատ գեղեցիկ, փափիկ ու կրքոտ Նաֆիէյին, որին ինքը բոլորից շատ էր ցանկանում... ո՛չ, ո՛չ, կարող էք ամեն բան տանել, սրիկանե՛ր, բայց Նաֆիէյին չէք կարող տանել, ես կը ապանեմ բոլորիդ էլ... և եթէ չկարողացայ սպաննել ձեզ, կը ինդղեմ Նաֆիէյին, գեղեցիկ, գեղեցիկ, անմահանօրէն գեղեցիկ Նաֆիէյին... իսկ սրանք ինչ են անում... բանկային թղթերս են գրազանիցս հանում, անտուկներս են դատարկում, կողոպտում են ամբողջ հարստութիւնս... ա՛խ, ստո՛ր գողեր, մարդասպաններ, ոճրագործներ... Դուք, որ սեփականացնում էք այդ բոլորը, արդե՞ք դիտէք, թէ ինչպիսի դժուարութեամբ եմ ես հաւաքել այդ հարստութիւնը և ինչքան անքուն գիշերներ եմ անցկացրել դրանց վրայ հսկելու համար... ա՛խ... կրկին կախաղաններ, կրկին դաշոյններ... առէ՛ք, տարէ՛ք բոլոր հարստութիւնս, տարէ՛ք բոլոր կանանցս, ինչ ուզում էք արէ՛ք, միայն ինձ մի՛ ըսպանէք, ինչպե՛ք կեանքս, ինչպե՛ք իմ կեանքը, միակ իմ կեանքը... օօ՛օ, նա շատ քաղցր է... շատ ու շատ քաղցր... նրա նման քաղցր բան չկայ աշխարհիս երեսին, իսկ որդիս...

Արդիւլ-Համիտ մինակ էր մնացել դիտարանի վերին յարկում, որտեղից նա սովոր էր դիտելու իր շուրջը և հսկելու բոլոր կատար-

ւածներն վրայ, նա մինակ էր մնացել իւր պալատում տաճնեակ հա-
զարաւոր մարդկանց մէջ: Մերունի սենեկապետը խօսոյն հեռացել էր
սենեակից Մէլէկին յայտնելու համար իրենց բարեկուրթ տիրոջ վճիռը
և անյայտացել դիտարանից: Ո՛չ միայն դիտարանում, այլ և՛ հա-
րիւրաւոր քայլ դիտարանից հեռու գտնուող տաղաւարներում ո՛չ մի
կենդանի չուէր չկար:

Սակայն Մէլէկը, Կարմիր Գաղանի հաւատարիմ լրտեսուհին այն-
տեղ էր, հսկում էր իր տիրոջ սենեակի առաջ որպէս շատ անձնա-
զոհ մի սարկուհի և երբ երկար սպասելուց յետոյ ներսից ո՛չ մի ձայն
չուէր, կամայով բացաւ դուռը և ներս մտաւ: Բայց որքան մեծ և-
դաւ իր դարմանքը, երբ տեսաւ ամբողջ Թուրքիայի սարտախը-կող
իր թագաւորի մինակ ու անօգնական մի թիկնաթուռի մէջ պառկած
դողալը...

Անյողթ (ղազի) հիւնքեարը կապտել էր, լեզակ կտրւել և...
դողում էր, դողում շարունակ:

Մէլէկը յուշիկ քայլերով մօտեցաւ, վերցրեց իր վրայից հաջա-
ղը և ձգեց իր տիրոջ վրայ, ապա սկսեց շատ մեղմօրէն մածել նրա
ձեռները, ճակատը, դէմքը, մինչև նա կամաց կամաց ուշքի եկաւ,
աչքերը բացաւ և շուրջը նայեց մտամուրդ ու թափառուն հայեացքով:

— Ո՛վ կայ այստեղ, ո՛վ է այդ... հարցրեց հիւնքեարը հազիւ
լսելի ձայնով:

— Քո հաւատարիմ աղախնը, տէ՛ր... մրմնջաց Մէլէկը մեղ-
մօրէն:

— Ո՛վ ես դու, կրկնեց հիւնքեարը:

— Քո ոտքերի փոշին, տէր ի՛մ... քո ամենահաւատարիմ ա-
ղախնը...

— Մէլէկ... ձայնեց վերջապէս հետզհետէ ուշքը գլխին հաւա-
քող սուլթանը:

— Քո աղախինն եմ, տէ՛ր...

— Ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես եկել, հարցրեց խստութեամբ վախ-
կոտ գաղանը և ցնցուեց, նստեց ուղիղ ու սկսեց նայել իր հաւա-
տարիմ աղախնուն, նրա հաջաղով ամբողջապէս իր դէմքը ծածկե-
լով ու բաց թողելով միայն աչքերը:

— Տէ՛ր, թող Բարձրեալը օրհնէ քո թագաւորութիւնը...

— Աստուած ինձ երեսի վրայ և մինակ է թողել:

— Մեղք մի՛ արա, տէ՛ր, Աստուած միշտ քեզ հետ է եղել և
այժմ էլ մինակ չեմ:

— Մինակ եմ, Մէլէ՛կ, բոլորովին մինակ, վտանգի ժամանակ
բոլորը ինձանից հեռացել են, նայնիսկ իմ հաւատարիմ բանակը ինձ
լքեց...

— Ես այստեղ եմ, տէ՛ր, թէև քո ոտքերի փոշին իսկ չարժեւ,
բայց իմ կրծքի յետև կարող եմ քեզ պաշտպանել ամէն տեսակ
վտանգների ու հարուածների դէմ... դու հաւատա՛ քո հաւատա-
րիմ աղախնուն, ու քեզ երբէ՛ք երբէ՛ք չի խաբել...

— Դու ինձ խաբում ես այժմ, Մէլէ՛կ...

— Թող դժոխքի բաժին դառնայ քո ոտքերի փոշին, եթէ քեզ
խաբում է, թո՛ղ սատանան իր բոլոր չարչարանքները ինձ համար
պահի, եթէ լաւ զգացումներով չեմ եկել այստեղ:

— Լա՛ւ, աա՛, ինչո՞ւ ես եկել...

— Քեզ ասելու, որ ո՛չ մի վտանգ չկայ...

— Իսկ անգլիական զրահաւորները... չէ՞, որ արդէն նրանք
Տարտանէլի տուջ են...

— Նրանք Միսիլինէի և Սալժուկի տուջ են, տէ՛ր, և այսօր
յետ կը դառնան դէպի Մալթա և Կիպրոս:

— Դու խաբում ես, Մէլէ՛կ, դո՛ւ փորձիչ սատանան ես... դու
կամենում ես իմ գլխի տակ փափուկ բարձ դնել ու քնացնել:

— Քո ոտերի փոշին քո պահապան հրեշտակն է...

— Լո՛ւի՛ր... կին դո՛ւ... և կորիր այստեղից...

— Տէ՛ր...

— Հեռացի՛ր, հեռացի՛ր շուտ, թո՛ղ ինձ իմ վշտերի հետ...
է՛յ, ո՛վ կայ դուրսը, ո՛վ կայ այդտեղ... եկէ՛ք, այս կնոջը դուրս
տարէ՛ք...

— Ոչ ոք չկայ, տէր ի՛մ, որ յանդգնի ինձ դուրս տանել, իսկ
ես չեմ գնալ, որովհետև ես միշտ պիտի լինիմ իմ տիրոջ մօտ այն
ժամանակ, երբ նրան վտանգ է սպառնում... միայն Ազրայիլը կարող
է ինձ հեռացնել իմ տիրոջ մօտից:

Արդիւլ-Համիտի դէմքը պայծառացաւ, ապա մթագնեց, աչ-
քերի մէջ խոչ որ գաղանային արտայայտութիւն ունեցող փայլ
երևաց ու անյայտացաւ, այտերը սրկեցին, յօնքերը ցածացան: Նա
ձեռքը տարաւ զրպանը և դուրս բերաւ մի սպիտակ փայլուն իր:
Մի վայրկեան յետոյ շատ փոքր պայթիւն լսեց, Համիտի ձեռքի
շուրջը և դէմքի հանդէպ ծուխ և բոց երևաց և դիտակի տակին
փչրեց ու թափեց գետին: Մէլէկը, որ նկատել էր վախեցած բրո-
նայեալի շարժումները ու հասկացել նրա մտադրութիւնը, խօսոյն
թեքեց հարուածի հակառակ կողմը դրանով աղաւաղով մահաւորի
հարուածից, որ դնաց փչրեց հեռագլխակի տակին:

Հարուածները և պայթիւնները մինը միւսին հետեցին հինգ
անգամ և բոլորն էլ անշնառ Մէլէկի համար, բայց փնասկար
հարուած դիտարանի այս կամ այն առարկայի համար: Հիւնքեարը
ի վերջոյ դէն ձգեց իր ձեռքի փայլուն իրը, հաջողը կրկին վրան

քաշեց և ընկնելով թիկնաթոռներից մէկի վրայ սկսեց լալ ու յուսա-
հատօրէն բացականչել .

— Մի կնոջ չափ էլ արժէք չունիմ ես այժմ, ո՞հ, ինչ դժբաղդ
եմ ես, ինչ դժբաղդ... ապա վայրկենական լուսթիւնից յետոյ ա-
ւելացրեց :

— Գոնէ կեանքիս խնայէին... գոնէ ինձ թոյլ տային, ապրէի...

Մէլէկը իտեա այդ յուսահատ բռնապետին վեհ ու հպարտ, ժղա-
տուն ու ինքնագոհ մօտեցաւ կրկին նրան, ծունկ չոքեց առաջը,
համբուրեց ոտերը, բռնեց ձեռները ու ասաց :

— Տէր, ինչո՞ւ ես յուսահատուում, չէ՞ որ քո հաւատարիմ աղա-
խներ միայն և միայն քեզ համար է ապրում...

— Մէլէ'կ, ների'ր... ես յանցաւոր եմ քո առաջ...

— Խալիֆաները, Տէ'ր, կարող են փորձել, բայց յանցանք գոր-
ծել չեն կարող...

— Ծիշտ է, ճիշտ է... մրմնջաց յուսահատ հիւնքեարը, ապա
յարեց .

— Ի՞նչ պիտի անենք, Մէլէ'կ...

— Հրամայի'ր աքսորել քո սենեկապաններից մի քանիսին, որ
քեզ այսպիսի վտանգաւոր ժամանակ մինակ թողուցին, ապա գլխա-
տի'ր քո անձնապահ բանակի հրամանատարներից երկուսին, որոնց
անուանորդ ահա գրուած են այս թղթի վրայ, ապա ֆէրման արա'
կոտորել հայերին, ուր որ էլ լինին նրանք, ձերբակալել առ'ւր աջ
մարդկանց, որոնց անուաները նոյնպէս գրուած են այս թղթի վրայ...

— Իսկ անգլիացիները...

— Նրանք չկան... քեզ այդպիսի սուտ լուրեր տուողներին էլ
բոլորին պատժի'ր անխնայ...

— Ուրեմն ես դեռ թագաւոր եմ...

— Թագաւոր և Խալիֆա, Տէ'ր, և ես քո հաւատարիմ աղա-
խին եմ...

— Իսկ դու ո՞րտեղից գիտես, որ անգլիացիք չեն գալու...

— Անգլիական զեապանատնից իմացայ... օօ'օ, Տէր ի'մ, Եւրո-
պացի զիպոմատները մի համբոյրի համար պատրաստ են բոլոր հայե-
րին կոտորել տալ... իսկ ես մի համբոյր տալով իմացայ ձեզ համար
կարեւոր մի գաղտնիք : Ռուսներն ու գերմանացիները մեզ հետ են,
հայ յեղափոխականների մէջ էլ կայ մի ամբողջ կազմակերպութիւն,
որ առաւ կառավարութեան գործիքներն են, այդպիսի մի կազմա-
կերպութիւն էլ մենք պիտի ստեղծենք : Եթէ բոլոր հայերին կոտո-
րենք, ոչ ոք ոչինչ չպիտի ասի մեզ, նոյն իսկ լուռ պիտի քաջալե-
րեն մեզ :

— Ապրի'ս, Մէլէ'կ, շատ ապրի'ս :

— Գնա', Տէ'ր, քո կապինէտը և կարգադրիր բոլորը, ինչ որ
աղախինդ խնդրեց քեզանից...

Հիւնքեարը հաջողը յանձնեց Մէլէկին, համբուրեց նրա ճակատը,
գրպանից հանեց բանկոտոմաների մի անագին կապոց և տուաւ նրան
ու ձեռները բռնելով :

— Դու իմ թագաւորութեան փառքն ես ու իմ պահապան հրեշ-
տակը, աղջի'կս...

— Ես քո աղախինն եմ, քո ոտի փոշին...

Եւ Մէլէկը նրա բէտէնգօթի փէշը համբուրեց երկիւղածութեամբ
ու մէջքից կէս ծռուած դիմաց դէպի դուռ :

— Իսկ ի՞նչ եղաւ Նայիլ-բէյի կին Սաբիրէն... հարցրեց Հիւն-
քեարը :

— Սեպտեմբերի 18-ի գիշերը ձերբակալուած և տարուած էր Թօփ-
հանէի պալատը, իսկ երէկ կարգադրուեց, որ այսօր կէս օրին բերեն
Ձերդ Մեծութեան կանանոցը :

— Գեղեցի'կ է...

— Այո'...

— Խելօք է...

— Այո'...

— Յեղափոխական է...

— Անիշխանական է, ամենավտանգաւոր մի յեղափոխական...

— Լա'ւ, գնա'...

Մէլէկը կրկին և կրկին գլուխ տալով հեռացաւ բանկոտոմաները
հաջողի տակ պահած, Կարմիր Գազանը դիտակով մի անգամ էլ
նայեց իր շուրջը, իջաւ դիտարանից և դանդաղ քայլերով ուղղւեց
դէպի իր կապինէտը :

Մէլէկը ճիշդ էր ասել, անգլիական զբաժանորդները երկու օր
առաջ մայրաքաղաքում տեղի ունեցող հայկական կոտորածից յետոյ
մօտեցել էին Միտելինէ կղզիին և կրկին վերադարձել շնորհիւ ուռ-
տական միջամտութեան : Կարմիր Գազանը դեռ ժամանակ ունէր նո-
ւանոր վայրագութիւններ անելու : Նա կապինէտում իսկոյն գործի
սկսեց և բոլոր պալատականները արդէն իրենց փափառքը թողած
սկսեցին իրենց սովորական գործին :

Մեծ քաղաքը նոր նոր էր զարթնում, մինչդեռ Երբեքը, Կար-
միր Գազանի որջը մի անագին վտանգ էր անցկացրել մի քանի ժամ
ւայ մէջ մահւան ճգնաժամի տանջանքներին մոտենում :

Բ .

Ամբողջ Տաճկաստանը մի ամբողջ է, ուր ապրում են միայն և միայն ստրուկներ, գերիներ, գրաստներ, անասուններ բոլորն էլ ամբողջատիրով կրքերին ծառայելու պատրաստ, այդ ամբողջի միջնաբերդն է Կարմիր գաղանի որջը (Նըլդըզը), ուր ապրողները հլու կամակատարներն են տիրող բռնապետի և պատրաստի կերակուր կարմրազգեստների դահճական դանակի, իսկ Օրթաքէօյի ու Բէշիկթաշի բարձունքների վրայ տարածող բաղմաթիւ չէնքերի մէջ կայ մէկը, միակը, որ աշխարհի երեսին գտնւող բոլոր հասարակաց տներից, տիրապետող դասակարգերի հիմնած այդ ամբողջներից ամենից լաւ զարդարւած, ամենից լաւ կազմւած սպիտակ գերիների այն բնակավայրն է, ուր հազարաւոր փոքր կրքեր ուռճանում, բարձրանում, փոթորկւում են աւեր առաջ բերելով իրենց շուրջը, իսկ հազարաւոր մեծ կրքեր մեռնում են, կորչում, անհետանում առանց որ և է ստեղծագործող աշխատանք կատարելու։ Այդ չէնքը Կարմիր Գաղանի որջի ամենահետաքրքիր մասերից մէկն է և կոչւում է նրա կանանոցը, իսկ նրա մէջ գտնւած գերիները կոչւում են ամենամեծազորդ մի կոչւմով, այն է, թագուհիներ, սուլթանուհիներ, կայսրուհիներ։

Իւրաքանչիւր կայսր ստրուկ է տիրող դասակարգերի բարոյական-սօցիալական և գաղաքական-ազգային հասկացողութեանց, իւրաքանչիւր կայսրուհի էլ աւելի ստրուկ է նոյն հասկացողութեանց, բայց գոնէ դրանց մէջ կայ որոշ կայսերական բան, գոնէ նրանք թագ են դնում, գահի վրայ են բազմում, գայիտն ունեն, գոնէ նրանք իրաւունք ունեն իրենց հպատակների կաշին քերթելու, աչքը հանելու, դէպի պատերազմ մղելու, թէեւ միշտ յանուն վերոյիշեալ բարոյական-հասարակական և քաղաքական-ազգային հասկացողութեանց, մինչդեռ Նըլդըզի որջում որջացած սուլթանուհիներն ու կայսրուհիները դարձեալ յանուն նոյն հասկացողութեանց կամակատար ստրուկներն են ամենայեպիս մի սարկի, մի ներքինիացած սեւամորթի, որ իրաւունք ունի նոյն իսկ ձեռք բարձրացնել, հարուածել կայսրուհի, սուլթանուհի կոչւած աշխարհի ամենաթրշուտ այդ արարածներին։

Սեպտեմբերեան այն օրը, երբ Կարմիր Գաղանը ճշմարիտ ճրգնաժամային մի դրութիւն ապրելուց յետոյ Մէլէկի չնորհիւ կարողացաւ իր առաջւան սառնութիւնն ու գործելու կարողութիւնը գտնել ու գործի սկսել, ճիշդ նոյն առաւօտը ամենածգնաժամային մի դրութիւն ապրեցին սուլթանուհիներն ու կայսրուհիները, մի աւելի սոս-

կալի, աւելի խայտառակ դրութիւն, որի նմանը ոչ ոք չի ունեցել մինչև այսօր։ Կարմիր Գաղանը սարսափում էր, կամենում էր փախչիլ, զառանցում էր, մեռնում էր վերջապէս, նրան չրջապատող պալատականները նոյնպէս սարսափում էին մահւան արհաւիրքների հանդէպ կանգնած, բայց չէ՞ որ այդ մի արդար պատիժ էր, որ հարստահարւած ժողովուրդները միշդ ընդունակ են հասցնել իրենց բռնապետներին, իսկ Նըլդըզի որջում չկար մի պալատական, ամաններ լացող մի լակոտից կամ բոխ ագէտ մի թուֆանկչիից սկսած մինչև հէնց ինքը Կարմիր-Գաղանը, որոնց ձեռները իրենց նմանների արիւնով թաթախւած չլինէին, մինչդեռ ինչ մեղք ունէին, իրենց որ յանցանքի համար պիտի պատժւէին, հալածւէին կամ կոտորւում էին այն կանայք, որոնք բաղդի դառն նենգութեան չնորհիւ կայսրուհի անունն էին վայելում և իրենց ամբողջ գոյութիւնը անց էին կացնում ո՛չ թէ ընդարձակ արքունիքի, այլ միայն մի քէօքի մի տաղաւարի չորս պատերի մէջ առանց արտաքին աշխարհի հետ մի տաղաւարի չորս պատերի մէջ առանց տարաքին աշխարհի հետ յարաբերութիւն ունենալու, առանց ապրելու հաճոյքը վայելած լինելու։ Յիրաւի ամենից արգահատելին այդ դրութիւնն էր, ամենից դրութիւնը, որ կոչւած է մեղաւորի հետ միասին նոյն մեղաւորի յանցանքի համար կառավարան գնալ։

Արդիւլ-Համբաի, Թուրքիայի այդ ամենազօր հիւնքեարի, կանաւոցը գտնւում է բարձր պատերի յետև ծածկուած և արքունիքի միւս մասերի հետ միայն մի կողմից միացած մի ծառաստանի մէջ, ուր հսկայական ու բարձրաբերձ ծառեր և անուշահոտ ու գոյնզգոյն ծաղիկներ սեպտեմբերեան այդ գեղեցիկ օրը շատ հաճելի անուշահոտութիւն էին արձակ իրենց շուրջը, որը չնչելով հաճոյք զգալու համար սակայն ոչ մի տրամադրութիւն չունէին կանանոցի հարիւրաւոր բնակչուհիները, որոնք խելակորոյս, ակնյայտի աղէտի հանդէպ յուսահատ, մահւան արհաւիրքների առաջ խղճացած մտածում էին միայն և միայն իրենց թշուառ գոյութիւնը մի քանի օրով էլ պահպանել, իրենց մահւան պատիժը մի քանի օրով էլ յետաձգել տալ։

Ճիշտ, որ զարմանալի են այդ կանայք. զարմանալի են եւ Էրանց նման շատ ու շատ մարդիկ, ինչն էր սովորւած նրանց երկարացնել իրենց գոյութիւնը մի քանի օրով էլ, քանի որ նրանք ոչ միայն գրկուած էին ամէն տեսակ հոգեկան-բարոյական կամ ֆիզիքական-մտաւոր բաւականութիւններից, այլ նոյնիսկ ամենատարրական կենդանային, բուսական, նոյնիսկ պրօթօպլազմային-նախանիւթային սեռելու, սեռական հաճոյք բնական կերպով վայելելու բաւականութիւնից, մի բան, որ նրանց կենդանական աշխարհի մէջ դատւած էր նոյնիսկ ամենատարր կենդանիներից ամենատարր աստիճանի վրայ... թէեւ նրանք մարդիկ էին և ոչ միայն մարդիկ այլ կայսրուհիներ, ապագայ կայսրերի մայրեր։

Կարմիր Գազանը չնական մի գգացումով պահում էր շատ կանայք, բազմաթիւ կանայք, որոնց հետ օրինաւորապէս կենակցելու իրաւունք ունէր, և որովհետեւ նա վախենում էր ամէն տեսակի ընկերակցութիւնից կամ միութիւնից, լինէր այդ միութիւնը կամ ընկերակցութիւնը իր պալատի պատերից ներս թէ դուռ և քանդում էր ամէն մի այդպիսի միութիւն կամ ընկերակցութիւն, արգելքներ յարուցանում նրանց դէմ, հետեւաբար ե՛ւ չէր կարող թոյլ տալ, որ իր կանանոցում ապրող կանանց մէջ միութիւն կամ համերաշխութիւն առաջ գար, որի շնորհիւ կարող էր՝ուժել իր ամբողջ կայսրութիւնը, դրա համար էլ նա բարեգութօրէն իր իւրաքանչիւր օրինաւոր կնոջ յատկացրել էր զատ բնակարան, տուել էր նրան իր սեփական նաժիշաները, որոնք սակայն երկար չէին մնում միեւնոյն տիրուհու մօտ, դրել էր նրանց վրայ հսկելու համար բազմաթիւ ներքինիներ ու լրտեսութիւններ, իսկ այդ բոլորի վրայ որպէս հրամանատար, տէր և սնօրէն իշխում էր իր խորթ-մայրը, որ պալատում յայտնի էր մայր-կայսրուհի անունով, որ արժանի էր մայրը լինելու այն գազանին, որին ոչ ոք չէր կամենալ իր որդին անուանել ու սիրել նրան:

Որքան նիհար և ջլտա էր որդին, այնքան գէր ու աւային էր մայրը, երկու հակասութիւններ ֆիզիքական, որոնք սակայն հոգեպէս իրար հետ այնքան համերաշխ էին, այնքան նման, որ կարծես հարազատներ լինէին: Ինչպիսի բռնաւոր որ էր առաջինը ամբողջ երկրի համար, նոյնպիսի մի բռնաւոր էր վերջինը կանանոցի համար և երկուսն էլ միմիանց օգնելով, միմիանց խորհուրդներ տալով ամբողջ տարիներ շարունակում էին աւերման ու սպանման այն զգուշիւ ու անէծքի արժանի գործը, որ Թուրքիայի մասնաւորապէս և ընդհանրապէս ընդհանուր ազգերի պատմութեան մէջ կարմիր գրերով պիտի արձանագրեն:

Մայր կայսրուհու բնակարանը միւս կայսրուհիների բնակարանից զատ էր, նոյն ծառաստանի մէջ թէև, բայց մի քանի կողմերից յարաբերող արքունիքի միւս մասերի հետ: Դա մի գեղեցկաչէն տաղաւար էր, որի ներսի շքեղութիւնը անպատճառ գերազանցում էր արտաքին փայլը: Ամեն բան արծաթազօծ և ոսկեզօծ ու արծաթեայ և ոսկեայ էին այդ տաղաւարում, և՛ կահաւորութիւնը, և՛ զարդերը, և՛ պճնանքը: Ամեն բան փայլուն էր այն տաղաւարում, որի գոյութիւնը յաւիտենական մի պատուհաս էր կանանոցում սպող կայսրուհիների համար:

Մայր կայսրուհին իր արամադրութեանը տակ ունէր ներքինիներ, դահճներ, լրտեսներ, աղախիններ, նաժիշաներ, գանակոծելու ու մարդկային մարմինը խոշտանքի ենթարկելու բազմաթիւ գոր-

ծիքներ, վարժուհիներ, զինւորներ: Իր բարոյական-ֆիզիքական ոյժը ամէն մի ըսպէ զգալի անել տալու համար ոչինչ չէր պակասում նրան, որ գիտէր խելացիօրէն օգտուիլ իր ձեռքի տակ եղած միջոցներից, ինչպէս իր խորթ-որդին, Կարմիր Գազանը, օգտւում էր իր իշխանութիւնից ու իր խալիֆայի դիրքից:

Մայր-կայսրուհին իր որդու կանանոցի տիրուհին էր, իշխանուհին, բռնապետուհին, Ազրայէլը, որի ամէն մի շարժումը կամ խրաքանչիւր ակնարկը մահուան կամ կեանքի վճիռ էր իր արամադրութեան տակ զանազակալի համար: Նա չար էր, անողոք, քննախնդիր, ամբարտաւան, նա ընդունակ էր իր բազմաթիւ լրտեսութիւնների միջոցաւ գիտնալ, թէ ի՞նչ է անցնում դառնում պալատում, կանանոցում, մեծամեծների կանանց շրջանում և ամբողջ քաղաքում: Նա գիտէր իր որդուն չըմպատող, նրա շնորհքին կամ քամահրանքին արժանացած բոլոր պալատականների և պետական մարդկանց անունները, նրանց կանանց թիւը, նրանց որդիների ունեցած աշխարհաճոցեացքը, որոնց բոլորին էլ ատում էր և ո՛չ մէկին չէր վստահանում բացի Մէլէկ-հանումից, այդ հոյակապօրէն գեղեցիկ լրտեսուհուց, որի տուած տեղեկութիւնները անպայման բոլորից ճիշտ էին ու ստույգ, և իր որդու թիկնապահ զօրաց մի պատանի հարկաւարանից, որի հետ սիրային յարաբերութեան մէջ էր լինքը, 70-ամեայ այդ պառաւը, և որ պաշտաման ու երկիւղածութեան զգացումով էր կապւած իր հետ և որին ինքն էլ սիրում էր պառաւ կնոջ յատուկ վախճոտ, նախանձոտ, կասկածոտ կրքերով ու մտահոգութեամբ:

Մայր-կայսրուհու բոլոր ստորադրեալները չէին յանդգնում նրան նոյնիսկ մի փոքր նկատողութիւն կամ անուշադրութիւն անել կամ մի չնչին խորհուրդ տալ:

Մայր-կայսրուհու անմիջապէս յետոյ կանանոցի վրայ բռնանում էին Նատիր և Ճէվհէր աղաները, ներքինապետ այդ ստրուկները, որոնք որպէս վաճառւած իրեր ընկել էին սուլթանական պալատ և կայսրուհիների վրայ մէկ մէկ բռնապետներ էին դարձել ու ամբողջ Թուրքիայի ճակատագրի վրայ մեծ ազդեցութիւն էին գործում շնորհիւ իրենց քառթեամբ ու բանասարկութեամբ Կարմիր Գազանի վրայ ունեցած ազդեցութեան: Այդ երկու գազանները, զրկւած մարդկային-կենդանական ամենագեղադոյն հաճոյքը վայելելու կարողութիւնից, զրկւած իրենց նման մարդկանց շնորհիւ ու նրանց ձեռքով, նոյն այդ մարդկանցից ամենաուժգին մի վրէժ լուծելու համար էին միայն սպրում որպէս այդ մարդկութեան շտատակար տարրեր:

Գլխաւոր բռնապետուհուց և այդ երկու խոշորագոյն բռնապետներից զատ կանանոցում վիստում էին ե՛ւ ուրիշ շատ փոքրիկ բո-



նապետներ : Մի սուտ լուր սուող խափշիկութիւնի սուլթանի , մայր-կայս-
րուհու և ներքինապետների մօտ աւելի շատ պատիւ և նրանց վրայ
աւելի շատ ազդեցութիւն ունէր քան ամենաարեւած սուլթանութիւն :

Ասենք կանանոցի բազմութիւն կանանց մէջ չկար մէկը , որ սիր-
ւէր իր «ամուսնու» , չկար մի «թագուհի» , որ սիրուէր թագա-
ւորից , ամուսին-թագաւորը դէպի իր կանայքը միայն մի զգայում
ունէր , ինչպիսի զգացում , որ աքաղաղը ունի դէպի իրան չըջապո-
տող հաւերը :

Կարմիր Գազանի որջում գտնուող բոլոր կայսրութիւններն էլ մինը
միւսից աւելի գեղեցիկ են , միմիանցից աւելի հոյաչէն ու հարուստ
մարմնով , իրարից աւելի գրաւիչ ու զգայուն : Բնութիւնը ոչինչ չի
խնայել այն կանանց գեղեցկութեան համար , անպայման սէրլի հա-
սակ , նուրբ ու գեղաչէն , սպիտակ շատ սպիտակ դէմք , այնքան
նուրբ մորթի , որի տակից երևում են նրանց երակներն ու արեան
չըջանաւորութիւնը կամ որոնց կոկորդի մէջ իսկ դեռ նշմարւում են
այն բաւերը , որ պիտի արտոնանեն նրանք , սե կամ կապոյտ աչ-
քեր , խորանդունդ ծովերից աւելի խոր , գրաւիչ , ձգող , մագնի-
սացնող հայեացք այնքան դիւրեկան , այնքան հաճոյալի , որոնց նա-
յի ամէն մի գեղարուեստատերին հոգեկան անխառն բաւականութիւն
կը պատճառի , սե կամ խարսեաչ խիտ մաշկը նուրբ , մոտաքսեայ ,
գեղեցիկ . . . իսկ նրանց ձեռները . . . նկարագրել այդ ձեռները ո՛չ
մի գրիչ չի կարող , այդ ձեռները համար կարելի է միայն մի բան
ասել . «չգլխիչ են . . . » : Նրանք ժպտում են շատ չնորհալի , արուես-
տականօրէն շատ գեղեցկացրած , նրանց շարժումները բոլորն էլ
չափւած են ու իրար շատ նման , նրանց ձայնը ախրողջ երգ է , իսկ
նրանց բաւերը մի մեծ երաժշտութիւն :

Այո՛ , գեղեցիկ , շատ գեղեցիկ են նրանք , հոյակապ , չքեղ ,
բոլորն էլ մէկ մէկ հրաշակիրտ , մէկ մէկ գեղարուեստական գլուխ
գործոյ , մէկ մէկ հրեշտակ , մէկ մէկ աստուածուհի , որոնց առաջ
մարդ միայն և միայն խոնարհւել , ծունկ չոքել , երկրպագել կարող
է և բնական է , որ այդ հուրները , այդ աստուածուհիները կարիք
էլ չունին սիրելու սեռելու համար , այլ նրանց սէրը յաւիտենական
ներդաշնակութիւնն է բնութեան , յաւիտենական ոյժը նիւթի , յաւի-
տենական գեղեցկութիւնն ու վսեմութիւնը գեղերող մարդկութեան
իտէպներ . . . Եւ մարդ մոռնում է ակամայ , թէ ինչպիսի մեծ
յոյսեր , խոշոր զգացումներ , գերազոյն տենչեր կան թագնուած այդ
կրծքերի տակ , այդ մարմարեայ կրծքերի տակ , որոնց վրայ ցցւող
և իրենց բարակ կօրսափի տակից երեացող երկու հոյակապ աշտա-
բակները միմիայն չլինած են աստուածներ անուշանկու կերակրե-
լու համար :

Այսպէս է կլինը , այսպէս է ստեղծել նրան բնութիւնը , բայց
այդպէս ստեղծւած կլինը որպէս «կայսրութիւն» , սուլթանութիւն , արդէն
կորցնում է իր բոլոր բանաստեղծականութիւնը , աստուածութիւնը
և դառնում է , մի հիւսնող մարդու կրքերին գերի , նրան հաճոյա-
նալու համար բամբասելու , բանասրկելու պատրաստ , իր նախան-
ծորդից աւելի լաւ հագնուել , զուգւել-զարդարելու համար վրէժ-
ինդիլ մի վագր , որի բրդոտ ու ագեղ կրծքի տակ մի արեան ծա-
րուի սիրտ է թաքաւում :

Կարմիր Գազանի պալատում աստուածուհին , կլին-մարդը , ստո-
րացած է , աւելի շատ ստորացած , անհամեմատ աւելի շատ ստորա-
ցած քան երբ և իցէ կարելի է երեւակայել : Սաքսոնիայի համեմա-
տարար աւելի ազատ մի թագուհի գերադասեց բանորութիւն լինելը
թագուհի լինելուց , իսկ մի սուլթանութիւն , Երզրդեան մի բնակչուհի
պէտք է գերադասի չուն լինելը թագուհի լինելուց , որովհետեւ չու-
նը այնու ամենայնիւ իրաւունք ունի չնանալու , մինչդեռ նա , այդ
կլին-մարդը , իրաւունք չունի ո՛չ միայն մարդ , այլ նոյնիսկ «կնիկ»
լինելու : Միայն պէտք է խոստովանուել , որ ո՛չ մի պալատ իրարից
չի տարբերւում այնքան էլ զգալի կերպով , բացի այն պալատներից ,
ուր ազատ մարդկութիւնն է բնակւելու և ուր կլին և ազամարդ
հաւատար իրաւունքներ պիտի վայելեն :

«Կայսրութիւն»ները ունեն իրենց բազմութիւն համիչները , աղա-
խինները և ներքինները , որոնք բոլորն էլ սակայն աւելի շատ պա-
տիւ ու դիրք ունին թէ պալատում և թէ դուրսը , քան ունեն ի-
րենց տիրութիւնները և որոնցից իւրաքանչիւրը մէկ մէկ ինստական ու
իշխանաւոր է նրանց վրայ : Պալատը և կանանոցը չնորհիւ այդ նա-
փիչաների , աղախինների ու ներքինների շարունակական ալեկոծման ,
փոթորկման ու ասրատման մէջ է : Նոյն իսկ աշխարհի բանապետներից
ամենաարեւնապետը , Ապդուլ-Համիտ . և իր նոյնքան չար արքանակ-
ները յաճախ են խաղալիկ դարձել այդ «փոքրիկ» մարդկանց ձեռին և
յաճախ նափիչաներից մէկի մի համրոյրը կամ ներքիններից մէկի մի
շարժումը ահագին պատուհաս են բերել ժողովուրդների , մարդկու-
թեան : Ո՛չ ոքի համար անձամբ չէ այն փաստը , թէ Փրանսական
արքունիքում մի փոքրիկ չնիկ էլ քաղաքական մեծ դեր է կատա-
րել ու Փրանսական պատմութեան ընթացքի վրայ ազդել մեզանից
մէկուկէս դար առաջ , իսկ այսօր եւրոպական ամէն մի արքունիքում
մի պոռնիկ կլին կամ մի աւազակ մարդ աւելի մեծ դեր են կատա-
րում քան պետական մի բարձրատիճան պաշտօնեայ : Ոչ ոքի հա-
մար անձամբ չէ եւ՛ այն փաստը , որ ուստական արքունիքը երկար
ժամանակ գազանի մի ստիկանի ցուցմունքներով էր ապրում :

Երբեք այդ կողմից կարող է գերակշռել բոլոր արքունիքները :

Կանանոցը ամենից շատ փափաց վտանգի ժամանակ, իսկ փրկ-
փառը աւելացաւ, երբ վտանգը բոլորովին անցաւ և կանանոցի չորս
սրտերի մէջ մինչև իրենց մահը բանտարկութեան դատապարտուած
գեղեցկուհիները լսեցին, որ շուտով կանանոց պիտի բերուի մի նմա-
նը չտեսնուած գեղեցկութիւն ունեցող չէրքէզուհի, որին հիւնքեա-
լը որոշել է իր կինը դարձնել խելով նրան իր ամուսնու ձեռքից։
Ենթադրութիւններ, կարծիքներ, սրտառուութիւններ մինը միւսին
էին յաջորդում կանանոցի այլ և այլ բաժանմունքներում, մինչդեռ
նախանձը կրծում էր բոլորի սիրտը։

Ուղիղ կէսօրին կանանոցում լուր տարածուեց, թէ կայսրը գա-
լիս է պատահելու նոր եկող չէրքէզուհուն։ Բոլոր կանայք իրար
անցան, իւրաքանչիւրը համոզում էր ներքինապետներին, որ կայսեր
առաջնորդին իրենց բաժանմունքը, իւրաքանչիւրը կամենում էր, որ
կայսրը գեղեցիկ չէրքէզուհուն պատահի իր ներկայութեանը։

Սակայն Արդիւլ-Համիտ Բ. ստանց որ և է մէկի հետ խօսելու
մտաւ կանանոցը պալատի ուրիշ մասերի հետ միտցնող նրբանցքից,
անցաւ մայր կայսրուհու առաջաւորի ստաջով և երբ մօտեցաւ կա-
նանոցին առաջ անցաւ իրան առաջնորդող ներքինապետից, բարձրա-
ցաւ առաջին յարկը ու մի քանի նրբանցքներից ու բաժանմունքնե-
րից անցնելով կանգ առաւ այն սրահի մէջ, ուր ամենից շատ էր
զուարճանում գնչուհիների պարերը զիտելով և ուր քննութիւն
էին տալիս իզբաղները իր կնութեան արժանանալու համար։

Սրահը ընդարձակ էր։ Մի շատ չքեղ դիւան գրուած էր պա-
տի տակ ճիշտ պատի մէջտեղ, որի վրայ նստողը կը տեսնէր սենեա-
կում ինչ որ կատարէր։ Յատակի վրայ փռուած էին դորդեր,
որոնց վրայ փափուկ միջնորդներ բնակեցաւ երեսներով ու ոսկեթել
ծովերով։ Լուսամուտների բոլոր փեղկերը փակ էին, լայն զիպակ-
եայ վարագոյրներն էլ ձգած։ Պատերի տակ այս ու այն տեղ դր-
ուած էին կարճ ու փոքրիկ ոսկեզօծ սեղաններ, որոնց վրայ հրա-
շալի ծաղկամաններով վարդեր։ Փաղային լապտերների մի ճոխ լոյս
լուսաւորում էր սենեակը։

Արդիւլ-Համիտ զիմեց ուղիղ դէպի դիւանը և թոյլ ընկողմա-
նեց նրա մէջ։

Դրան առաջ կանգնած մնաց երկարհասակ սեաղէմ՝ դժիւսմ
ներքինապետը թեւերը կրծքին ծալած ու աչքերը յառած ուղիղ
իր վեհապետին, որի ամեն մի շարժումից նա պարտաւոր էր նրա
կամքը հասկանալ և բոտ այնմ էլ կատարել, ինչ որ իրան կը հրա-
մայէր։

— Սաբիրէին դեռ չե՞ն բերել . . .

— Ո՛չ, Ձերդ Մեծութիւն, նա այժմ Թօփ-Հանէի պալատն է,

որտեղից պիտի տանեն Շէյխ-Իւլ-Իսլամի մօտ վերջնականապէս Ս.
Մարգարէի կրօնը իր ուրանալու պատճառները խոստովանեցնելու,
որից յետոյ պիտի բերեն այստեղ։

Արդիւլ-Համիտ ձեռք չարժեց հորիզոնական ուղղութեամբ։ Ներք-
նապետը դուրս եկաւ։ Հիւնքեալը մնաց մենակ՝ դէմքով մուսլ
բայց հողով հրճուին։ Նա անհունապէս զոհ էր ինքնիրանից և որով-
հետեւ երեք չորս օր բոլորովին չէր զուարճացել ու հանգստացել,
եկել էր հանգստանալու իր կրած յուզումներից յետոյ։

Ներս մտաւ տաճարամեայ Նոսրիյէն, Գաղատանի լանջերի անվե-
հեր ծնունդը, այժեամբ նման թեթեւ, օձի նման ոլորուն, եղնիկի
նման ճկուն, առիւծի նման անվեհեր ու աղաւթի չափ միամիտ մի
աղջիկ, որին խելագարի պէս էր սիրում Կարմիր Փաղանը և որի
ներկայութիւնից ամենից շատ էր ախորժում։ Կանանոցի ընակիչնե-
րից միայն մանկահասակ Նոսրիյէն իրաւունք ունէր աղամարդկանց
յարկարածիները, նայնիսկ հիւնքեալի առանձնասենեակը գնալու և
միայն նա էր, որ կարող էր վախկոտ զազանի մարմնի այս կամ
այն մասին զիպչել ստանց մահաւան երկիւղ ունենալու։

Գ .

—Նտարիյէ՛, ժպտուն կանչեց նրան կայսրը, որի դէմքը պայծառացաւ, հայեացքը մեղմացաւ, զիմաղծերը ցնցուեցին, ե՛կ, ե՛կ ինձ մօտ, աղաւնի՛ս :

Մանկահասակ աղջիկը առանց այդ հրաւերին էլ արդէն ուրախ ու ցատկոտելով մօտեցել էր հիւնքեարին, ծունկ չոքել նրա առաջ, նախ ոտը, ապա փէշերը, ապա ձեռք համբուրել և նոտել գլուխը : Կայսեր հարազատ աղջիկը նոյնիսկ այդպիսի յանդգնութիւն երբեք չէր ունեցել :

—Ի՞նչպէս է իմ պատուական տիրոջ աստուածային առողջութիւնը, հարցրեց աղջիկը նրա դէմքը շոյելով, ինչո՞ւ իմ աստուածաշուք տէրը երեք օր շարունակ ինձ տեսնելուց խուսափեց :

Աբդուլ-Համիտ այդ բռնէին երջանիկ էր, նա զգում էր, որ իր բոլոր լաւ խօսքերից միայն այդ աղջկայ ասածներն են անկեղծ, հետեւաբար ե՛ւ միայն այդ աղջիկն է իր բարեկամը : Եւ ի՞նչ բան կարող է մի մարդու աւելի շատ զուարճացնել, քան այն զգացումը, թէ ինքը մի բարեկամ ունի : Բայց որովհետեւ այդ մարդու մէջ մարդկային շատ քիչ բան էր մնացել և ինչ որ կար անասնական էր կամ զազանային, նրա խկական հոգեկան զուարճութեան հետ նրա մէջ զարթնեցին ե՛ւ անասնական-սեռային բաւականութիւններ, կամ կրքեր, որ նա զգում էր իւրաքանչիւր կին արարածի ներկայութեամբ ու հպաւորութեամբ, նոյնիսկ եթէ այդ արարածը իր քոյրը կամ զուարթը լինէր :

—Նտարիյէ՛, անուշի՛կս, երեք օր քեզ չտեսայ, ճիշտ է՛, բայց զիտե՛ս, ինչպէս քեզ կարօտեցի... դո՛ւ... Նտարիյէ՛... միակ էակն ես, որ անխառն հաճոյք ու բաւականութիւն ես պատճառում ինձ...

—Ես ինձ ամենաներջանիկ արարածն եմ համարում աշխարհիս երեսին, աստուածային տէ՛րս, երբ մտածում եմ, որ դու ինձ սիրում ես...

—Այո՛, թու՛նի՛կս, ես քեզ շատ շատ եմ սիրում... իմ հարազատ աղջիկներից շատ...

Մանկահասակ աղջիկը շարունակ նոտած նրա գրկին հետզհետեւ հանում էր իր հագուստները, մինչև բոլորովին մերկացաւ, մինչ այդ կայսրը համբոյրներ էր դրօշմում նրա կարմիր այտերին, նրա սպիտակ վզին, նրա կաթնաման ու իր տարիքի համեմատ շատ մեծ ու պինդ ստինքներին, և նրա մարմնի այլ մասերին, նոյնիսկ ստերին : Ամբողջ Թուրքիան սարսափեցնող հրէշը ուղղակի լիզում, ծծում էր

փոքրիկ աղջկայ մարմնի բոլոր մասերը ու ստորացած, փոքրացած նրա առաջ ծունկ չոքում, գրկում, իր կրծքին սեղմում, դարձեալ համբուրում :

Մերկ մանկուհին զգում էր իր խլանութեան ու տիրապետութեան այժը և հրճում էր, ծիծաղում, խաղում, պար գալիս նրա գրկերի մէջ, նրա առաջ :

—Իմ տէրը ինձ երջանկացնում է միշտ իր այս կատակով :

—Դու ինձ աւելի ու աւելի շատ ես երջանկացնում, Նտարիյէ, գաւնուկս :

Մինչ այդ աղջիկը գլխի վրայ պոչաւելով հեռացաւ կայսեր մօտից, որ վեր կացաւ նրան բռնելու և մինչ աղջիկը սլակեց մէջքի վրայ ու կայսրը մօտեցաւ նրան բարձրացնելու համար, կայսեր գլուխը պանից ընկաւ այն փայլուն ու գեղեցիկ իրը, որով քիչ մնաց պիտի սպանուէր գեղեցիկ Մէլէկը պալատի ղիսարանում, որ ժամանակ զազանի դէմքը մռայլուեց ու սրկուեց : Աղջիկը վեր ցատկեց, վերցրեց փայլուն իրը և մի ճարպիկ ոտիւն անելով կանգնեց պատի տակ խաղալիքը ձեռին, ծիծաղկոտ, ժպտուն : Աբդուլ-Համիտ գունաթափուեց, ուժաստատ եղաւ, ցնցուեց, կանգ առաւ : Աղջիկը շարունակում էր ծիծաղել ու փայլուն առարկան դարձնել իր ձեռի մէջ :

—Տո՛ւր ինձ այդ խաղալիքը, կարկամած ձայնով փախաց սուլթանը :

—Չեմ տալ, սա գեղեցիկ է, չեմ տալ, չեմ տալ, պատասխանեց աղջիկը շարունակ ծիծաղելով : Իր այդ դրութեան մէջ Նտարիյէն իր մերկ գեղեցկութեամբ ամուրի (amour) տալաւորութիւնն էր թողնում, որի ձեռքն կար աղեղի տեղ ատրճանակ, և որի առաջ խոնարհում, վախենում ու կուչ էր գալիս մի վհապետ, մի մարդ, մի արարած :

Աբդուլ-Համիտ երկիւղից խելայեղ յետ յետ քաշուեց, աչքերը ուղիղ աղջկայ կողմը, ձեռքը տարաւ գրպանը, դողդոջուն, ցնցում, հանեց նման մի ուրիշ իր, և ուղղեց դէպի մանկահասակ գեղեցկուհին : Աղջիկը շարունակում էր ծիծաղել : Պայթեց փայլուն իրը, ծուխ ու ձայն բարձրացաւ, և աղջիկը անշնչացած ընկաւ գետին : Ուղիղ կրծքին էր դիպել գնդակը և վիրաւորել սիրտը : Կարմիր արիւնը անմիջապէս ներկեց սիրուն աղջկայ սպիտակ մարմինը, որ վարդերի մէջ ընկողմանած հրէշտակի տեսք ստացաւ :

Աբդուլ-Համիտ խիղջն ցատկեց նրա զլակի մօտ, նրանից քիչ հեռու ընկած ատրճանակը խցեց ու գրպանեց, ապա ծափահարեց, ներս մտաւ ներքինապետը, որ իր տիրոջ ձեռքի մի նոր շարժման իբր հնազանդութիւն ծածկեց մի մինդարով մանկահասակ զիակը և զուրս եկաւ :

Արդիւլ-Համիտ նստեց կրկին դիւանի վրայ, գունատ, դողդոջուն, մաւր, ապա հագուստները ուղղեց ու ընկողմանեց: Նրա սիրտը բարբախտւում էր այնքան ուժեղ, որ արձագանգւում էր սենեակում ու սարսափ ազդում իրան:

Մտան մի քանի րոպէ յետոյ ներքինապետը և մի քանի տարուկներ, վերցրին փոքրահասակ Նասրիէի դիւանը, դուրս տարին, իսկ երկուսը նրա արիւնով օծուած միստարները վերցնելով, տեղը նորը ձգեցին: Ներքինապետը կանգնեց դրան առաջ ժպտուն, հպարտ, բայց միշտ ձեռները ծալած իր կրծքին:

Համիտ մի նոր շաժում էլ արաւ: Ներքինապետը դուրս եկաւ: Ներս մտաւ մի գեղեցիկ կիսամերկ նաժիշտ, դէմքն ու մազերը ծածկած, ոսկի մատուցարանի վրայ լիմօնէ օշարակ ձեռն: Կայսրը միայն մի կում առաւ: Նաժիշտը դուրս ելաւ: Լսեցին ուրախ ու կիրք զրգուող երաժշտութեան ձայներ:

Արդիւլ-Համիտ եկել էր զւարճանալու, նա երեք օր շարունակ տանջւել էր, գեգերել պալատի այս մասից այն մասը, սպասել անհամբեր մի վտանգի, մինչդեռ այժմ այլևս հանգիստ էր, մանաւանդ երբ մտածում էր, որ երկրի այս ու այն մասում կոտորածներ պիտի լինին և իր ձեռները կրկին արիւնով պիտի լւացուին: Նա սպանել էր միակ էակին, որ իրան անխառն զւարճութիւն էր պատճառում: Մի ուրիշ մարդ նրա տեղ շատ ու շատ անհանգիստ պիտի լինէր, խղճի խայթ պիտի զգար, բայց նա, այդ մարդկային վիժումքը, բնդհակառակը հոգեկան մեծ բաւականութիւն զգաց: Նրա համար սիրելի էր միայն իր անձը, որի համար էլ նա պատրաստ էր զոհել ամեն բան:

Երաժշտութիւնը շարունակում էր հետզհետէ աւելի զրգուիչ ու աւելի զուարթ դառնալ: Կայսրը հոգեկան անհուն հրճւանքով էր լսում: Նա երաժշտատէր էր, բայց սիրում էր ոչ թէ մեղմ, հոգին ազնւացնող կոտորներ, այլ զրգուող, բարկութիւն առթող կտորներ, որոնք աւելի լաւ էին ներդաշնակում նրա հիւանդ հոգու հիւանդ ու մոլեգին պահանջների հետ և աւելի մեծ բաւարարութիւն տալիս նրանց: Նա գիտում էր դիմացը կախուած մի պատկերի, որ ներկայացնում էր իր սպանել տուած մարդկանց գանկերի հետ խաղաղող մի բանապետի, մի իսկական հրէշի, որ սաղաւարտը գլխին, դրահները հագին, նիհար, ջլուտ, ոսկրոտ, զլորում էր բազմաթիւ գանկեր մէկը միւսի յետեւից: Այդ խաղը մեծ հաճոյք էր պատճառում սաղաւարտաւոր-դրահներ բանապետին, իսկ պատկերը մեծ բաւականութիւն էր պատճառում մանուկներ սպանող հրէշին, որ որքան նայում էր այդ պատկերին, այնքան աւելի էր հրճւում:

Յանկարծ բացեցին սրահի դռները և երկու կողմից բազմաթիւ պարեկող կանայք ջահլ թէ պառաւ, սե թէ սպիտակամորթ, կիտա-

մարկ թէ մերկ, ներս մտան իրար յետեւից և շարեցին երկու պատերի տակ, յետոյ ներս մտան արեւելեան երաժիշտները իրենց սաղով, քէմանով, քէմանչայով ու այլ գործիքներով, ապա մտան բազմաթիւ ներքիններ, որոնք բոլորն էլ ոտի վրայ կանգնած մնացին: Գուրար լուց եւրոպական երաժշտութիւնը և ներսը սկսուեց մի ուրիշը, իսկական ամառան, մեղմ, երկար, գայլալուս, երբեմն էլ զիլ, հոգի ճանկուող, խոցող: Հիւնքեարը հրամայեց իսկոյն մի պար եղանակ նուագել, իրան շատ սիրելի մի պաղշոտ, զրգուող պար եղանակ: Մի կիսամերկ գնչուհի, նիհար, ոսկրոտ, արեւից խանձւած, սե մարմնով, միայն կարճ մինչև ծունկը հասնող միմիանով ծածկած իր զիւտերն ու յետոյքը և մի բարակ ու մինչև պորտը հասնող շապիկով ծածկած իր իրանը այնպէս, որ նրա պորտն ու ստիքները բուրովին բաց էին և մի բոլորովին մերկ, միայն բարակ շորով ամբողջ մարմինը ծածկած, գեղեցիկ, սպիտակ, հակապակազմ աղպահուն սկսեցին պարել: Օօ', այդ զգուելի, շատ զգուելի պարը... դա բոլոր մեծամեծների բարոյական անկման իսկական պատկերն է, դա կենդանի արտայայտութիւնն է այն անամանական իրականութեան ու դարչ աղտեղութեան, որոնց մէջ փտում, ոչնչանում, ճահճանում են երկկրներ կառավարողների ուղեղն ու սիրտը: Նուագի ներդաշնակութեամբ, ակկորսների համեմատ պարողուհիները շարժում էին իրենց մարմնի այլ և այլ մասերը այնպիսի ճարպկութեամբ ու լարչութեամբ, որ որքան առաջինը հիացնում էր մարմնի էլաստիկութեան զարդացման սիրահարին, այնքան վերջինը զգուեցնում էր մարդ արարածին: Նկարագրել պարը չենք կարող մեր ընթերցողներին ճաշակը չփչացնելու համար, միայն աւելորդ չենք համարում ասել, որ երբ նրանց պորտերը իրար էին գիպում, նրանց ոտքերը բարձրանում էին այլանդակ ձևերով, Արդիւլ-Համիտ աւելի ու աւելի շատ էր զուարճանում, ինչպէս և զուարճանում էին բոլոր ներքինները: Պարողուհիները հետզհետէ շատացան, բոլորն էլ նման զոյգեր կամ զրեթէ նման հագնւած թէքեր, որոնք իրար յաջորդելով, իրենց մարմնի այլանդակ շարժումներով միմեանց գերազանցել ջանալով միմեանցից աւելի հաճոյք էին պատճառում ամբողջ Թուրքիայի տիրոջ, որին սակայն ամենից շատ գրաւել էր առաջին անգամ պար եկող գնչուհու պարը, որ նրա հրամանով քանիցս կրկնեց իր պարը բոլորովին մինակ: Հիւնքեարի հիացումը ի վերջոյ այն կէտին հասաւ, որ կանչեց նրան իր մօտ, նայեց նրա մարմնի բոլոր մասերին և ծիծաղկոտ դէմքով հարցրեց.

— Այս ոսկրները ինչպէ՞ս եւ կարողանում այնպէս ոլորուն ու ձկուն դարձնել, որպէս ոլորուն և ձկուն է օձը...

— Զերդ աստուածաշուքութեան ոտքերի փոշին օձի կաթ է խմել

ու նրա թոյնը ծծել, ասաց գնչուհին սարսափ աղաղակով մի ժպիտով, որ նրա սև գէմքին իսկական սատանայի արտայայտութիւն տուաւ: Նրա հայեացքը բացալատուեց, աչքերի սպիտակուցը շարժուեց, միանշանքը ցնցուեցին:

Ամենազօր հիւնքեաբար աչքերը խոնարհեցրեց, դժգունեց, ստորացաւ, կուշ եկաւ և պինդ սեղմեց դիւանին: Կինը շարունակում էր ժպտել: Հիւնքեաբար մի շարժման վրայ երաժիշտները դարձեալ նուագեցին մի պար երգ, որ ժամանակ գնչուհին մի թեթեւ ոտախնով հեռացաւ իր տիրոջ մօտից, մի քանի աւելի ճարպիկ շարժումներ էլ արաւ, մարմնի ամեն մասը ցոյց տուող մի քանի աշխոյժ թափփներ էլ գործեց ու ինչպէս թեթեւ ոտով հեռացել, նոյնպիսի ճարտար ոտով էլ մօտեցաւ կրկին վախկոտ հիւնքուհին, ծունկ չոքեց նրա առաջ, վերջերց նրա ձեռքը ու իր գլխի վրայ դրաւ:

— Աղախնդ, ոտքերիդ փոշին անհունապէս ինքնիրան երջանիկ պիտի զգայ, եթէ որեւէ բանով կարողանայ քեզ օգտակար լինիլ:

— Դու սրբազանի ես, հարցրեց Աբգիւլ-Համիտ:

— Բռնամայից:

— Անունդ ի՞նչ է:

— Հանիֆէ:

— Ե՞րբ ես եկել Պօլիս:

— Միայն երկու շաբաթ առաջ:

— Ինչո՞ւ ես եկել:

— Քեզ ծառայելու ու զուարճայնելու համար:

Աբգիւլ-Համիտ ժպտուն ու երջանիկ ձեռքը շարժեց: Ներքին նապար զգուշութեամբ ու յարգանքով մօտեցաւ գնչուհուն, խոր գլուխ տուաւ նրան ու:

— Ձերդ շնորհալի մեծութիւն, ասաց, մեր տիրոջ շնորհը մեծ է քեզ վրայ, հետեցէ՛ք ինձ, որ ձեզ ձեր բնակարանը առաջնորդեմ:

Գնչուհին համբուրեց սուլթանի ձեռքը, ճարպիկ ոտով լարձրացաւ նստած տեղից, չարախնդաց ժպիտը երեսին ու պայծառ գէմքով նայեց իր շուրջը ու հետեց ներքինապետին:

— Կայէ՛ք, լսուեց ապշած բազմութեան լուսթեան մէջ վեհապետի ձայնը, որ գերեզմանից լսուող ձայնի չափ սարսափ աղաղակ իր ունկնդիրն ըին:

Ներքինապետը յետ դարձաւ ու ծունկ չոքեց, նոյնը արին բոլոր ներկաները, նոյնը արաւ ե՛ւ գնչուհին:

— Բաղնիք առաջնորդեն թո՛ղ այդ կնոջ, օձեն նրա մարմինը անուշահոտ իւղերով, հազցնեն սնդուս, բեհեզ ու մետաքս, ոսկով ու գոհարեղէններով զարդարեն, ապա առաջնորդի՛ր այստեղ... իսկ

մինչ այդ Նասրիէյի մահճակալը թո՛ղ պատրաստեն, միայն սաւաններն ու բարձի երեսները բոլորն էլ փոխուած լինին:

Ներքինապետը կրկին և կրկին գլուխ տուաւ և դուրս եկաւ: Նրան հետեց գնչուհին, որին հետեցին մի տասնեակ ներքինիներ: Պալատի վարք ու բարքի ու գաղտնիքների հետ ծանօթ մարդիկ խափոյն հասկացան, որ գնչուհին շատ մեծ շնորհքի էր արժանացել: Այդ սև ու տարիքով կինը պիտի բռնէր սիրուն ու մանկահասակ Նասրիէյի տեղը:

Տիրեց սրահում երկարատեւ լուսթիւն: Աբգիւլ-Համիտ ընկողմանեց դիւանի վրայ, բայց չկարողացաւ հանգիստ լինիլ, բարձրացաւ, կրկին նստեց, կրկին ընկողմանեց: Այդ ժամանակ երաժիշտներն սկսեցին մի քրդական շուրջ-պար, որին մասնակցում էին բոլոր կանայք մեծ թէ փոքր, կիսամերկ թէ շղարշով ծածկուած, սեւամորթ թէ սպիտակամորթ: Վերադարձաւ ներքինապետը: Աբգիւլ-Համիտ դարձեալ ձեռքը շարժեց: Ներքինապետը կրկին հեռացաւ և խափոյն վերադարձաւ Նաֆիէ սուլթանուհու հետ, որ անցաւ պարտիների արանքով, անցաւ իր տիրոջ առաջով ու դիմեց դէպի հակառակ կողմի դուռը: Աբգիւլ-Համիտ հետեց նրան: Պարը խափոյն դադարեց: Կանայք նստեցին մինդարների վրայ: Ներքինիներից ոմանք սկսեցին նրանց հետ պազշտ կատակներ անել, ոմանք էլ շտապեցին դուրս նրանց համար շարքաթ ու քաղցրեղէններ բերելու: Երաժշտութիւնը ընդհատ ընդհատ շարունակում էր:

Աբգիւլ-Համիտ իր կնոջ հետ առանձնացաւ սրահի կողքի սենեակում, որ թէեւ փոքր էր, բայց շատ շքեղօրէն կահաւորուած: Փափուկ մինդարներով ու շատ փափուկ դօշակներով ծածկուած էր ամբողջ յատակը, վանդակներով ծածկուած լուսամուտներից շատ աղօտ լոյս էր թափանցում ներս ու հազիւ լուսաւորում կիսախաւար սենեակը: Սուլթանուհին մտնելով սենեակ վար ձգեց վրայից իր սպիտակ մետաքսեայ ֆերածէն, ամուր ծածկուած մազերը արձակեց ու պառկեց լուսամուտների հանդիպակաց պատի տակ իրար վրայ ձգուած հաստ դօշակների վրայ, ուր ընկողմանեց ոսկեղոյն սաւանների մէջ: Աբգիւլ-Համիտ նրանից հեռու կանգնած մտածուրդ գիտում էր նրան:

Նաֆիէ սուլթանուհին հազիւ 18 տարեկան կը լինէր, սպիտակ ու հարուստ մարմնով, բարդու պէս գեղեցիկ հասակով ու մի խափան անդրիի նրբութիւնը ունեցող դիմազօծերով: Նրա կարճ ոսկեղոյն միւթների տակից երևում էին նրա սպիտակ ու փափուկ սրունքները մինչև գլխերը, իսկ բեհեզայ կարմիր չէփէնի տակից դուրս էին ընկել իր մեծ կաթնաման սալիքները: Նրա մազերը թափուած էին իր կիսամերկ փղոսկրեայ իրանի վրայ, մինչդեռ ան-

հանգիստ ելեւելող կուրծքը իվեր էր հանում նրա վզի տակ գլու-
նուող փոսիկի ամբողջ գեղեցկութիւնը, որ նրա չնչառութեան հա-
մեմատ երբեմն ծածկւում, սեղմւում էր նրա սպիտակ փափուկ
մսերի տակ, երբեմն բացւում, կուչ գալիս նոյն մսերի մէջ: Նրա
սպիտակ ձեռները և կիսամերկ սպիտակ բաղաւկները այնպիսի հա-
մապատկիւն ունէին կարծես շինւած լինէին մի հմուտ վարպետի
ձեռքով:

Արդիւլ-Համիտ կանգնած դիտում էր նրան, նայում նրա գե-
ղեցիկ դէմքին, հրաշագեղ մազերին, հոյակապ իրանին, դիտում
նրա սրունքները, զիտները, բազուկները, թևերը: Կիսախուար սնն-
եակի մէջ վախկոտ դադանը չէր յանդգնում իսկոյն մօտենալ իր կը-
նոջը, այլ դիտելով նրան ու նրա շուրջը յոյս ունէր գտնել իր դէմ
սարքւած մի դաւադրութեան հետք: Գեղեցիկ կինը անշարժ պառկել
էր ճիգ գործ դնելով իր սրտի բարախիւնն ու կրծքի անհանգիստ ելե-
ւելն իսկ դադարեցնելու համար: Հիւնքեարը մի քանի րոպէ անշարժ
իր առաջ ընկողմանած անշարժ էակին նայելուց յետոյ վերջապէս մօ-
տեցաւ նրան, ձեռքով շօշափեց նրա թևերի տակը, չէփկէնը բանալ
տալով շօշափեց նրա ամբողջ իրանը, ապա մինթանի տակ ալ փն-
տեց որևէ վտանգաւոր գործիք, նոյն իսկ նրա գլխատակն ու
մինտարներն տակ որևէ բան փնտռեց և երբ համոզւեց, որ ոչինչ
չկայ յանդգնեց պառկել նրա մօտ: Սուլթանուհին աշխատում էր
նոյն իսկ իր չնչառութիւնը սրահել, որպէսզի որևէ դաւադրութիւն
յայտնող կտակած չը ներշնչէ իր ամուսնուն: Արդիւլ-Համիտ, որ
իր գոյութեան սկզբից մինչև վերջը չէ սիրել իր շուրջը եռացող
կեանքն ու շարժումը, չէ սիրել և՛ այն հաճոյքը, որ ճշմարիտ ու
անկեղծ սէրը կարող է առթել ամեն մարդու: Նա ցանկացել է իր
բոլոր յարաբերութիւնների ժամանակ իր առաջ և իր շուրջը միայն
դիակներ տեսնել և ամենաեռանդոտ, ամենակրակոտ ու ամենա-
աշխոյժ կինը անգամ նրա անկողնի մէջ պարտաւորւած էր մի իս-
կական դիակ դառնալ, անշարժ, անշունչ, անզգայ: Նա միայն դի-
ակներ էր սիրում և դիակների մէջ էլ ապրեց:

Ընդհատ ընդհատ շարունակւող երաժշտութեան պազգոտ եղա-
նակները հետզհետէ դադարեցին ու սկսեց քէմանչէի մի հիանալի
նուագ, որ խօսում էր իւրաքանչիւր մարդու սրտի հետ, կտրատում,
տանջում նրա հոգին: Վարպետ մատերի հարուածների տակ լացում,
հեկեկում, չնչառաւ լինում ու տանջւում էին լարերը, երգում
նրանք մի յուզող ու սիրա կտրատող երգ, գովքը անելով հին
գեղեցկուհիների ու հին կտրիճների միմիանց նկատմամբ ունեցած սի-
րոյ: Հետզհետէ քէմանչէին միացաւ և՛ երգի մի ձայն, հնչուն, գե-
ղեցիկ, գայլալան, գրգռիչ, հուժկա երբեմն, երբեմն մեղամաղձոտ:

Բոլորը լսում էին նրանց, լսում էին և՛ Նաֆիէ սուլթանուհին ու
Արդիւլ-Համիտ սուլթանը, որոնցից առաջինը լուռ արտառւում էր,
իսկ երկրորդը լուռ զայրանում:

«Բարձր լեռների ջինջ ու յատակ ձիւնից աւելի ձերմակ է սի-
րուն Լէյլան: Վարդ են նրա այտեր, շուշան ժպիտը, մեխակ նրա
չրթներ, հուր կրակ հայեացքը: Սուլթի բաշից, արևի շողքից, նուրբ
են ու սիրուն նրա մազերը: Եղնիկից ձկուն, օձից ոլորուն, բարդու-
է նման նրա հասակը, քալումքը մեղմիկ, մեղմիկ ու յուշիկ հրեշ-
տակի նման, շարժումը թուխք, թուխք հոյակապ, մեծ արծուի նման:

«Սիրուն է Լէյլան անապատների սիրուն թագուհին, սիրուն է
Լէյլան անապատների մեծ թագաւորի գեղեցիկ կինը: Մեծ թագա-
ւորը մի բռնապետ է: Արիւն են լացում հպատակները, չարքաշ
կեանք վարում իր ստրուկները: Տաանեակ արքաներ նրան հպատակ՝
գերի հաճոյքին իրենց յաղթողի՝ լուռ քարշ են տալիս իրենց գոյու-
թիւն: Տաանեակ երկիրներ միշտ առաքում են յաղթող արքային
իրենց տուրք ու հարկ, իսկ շատ իշխաններ միշտ կազմ պատրաստ
իր հրամաններին տիրում իշխում են նոր երկիրների:

«Սիրուն է Լէյլան, բայց նա չէ սիրում արքայ ամուսնուն, այլ
մի խեղճ երգչի, մի խեղճ աշուղի, որի երգն ու առջ միշտ սէր են
երգում, միշտ սէր գրուատում ու սիրոյ համար հալւում ու մաշւում:

«Սէր... սէր... սէր... դա Աստուածային հուրն է միշտ անշնչ,
դա տիեզերքի արևն է միշտ ջերմ, դա երկրագնդի նիւթ գօրութիւնն
է, դա կնոջ սրտի անթառամ փունջն է ու շքեղ զարդը...»

Դայլայլում է երգչի ձայնը, կերկրում, յուզում, երբեմն
ցածանում, երբեմն բարձրանում, հեռւում ու տքնում են վարպետ
մասնների հարուածների տակ երաժշտական գործքի լարերը կամ բա-
ցազանչում, մեղմօրէն սուլում:

Լսում են փափուկ ու ոսկի սաւանով ծածկւած մինտարի վրայ
պառկող գեղեցիկ սուլթանուհին ու բռնաւոր սուլթանը երկուսն էլ
անշարժ, երկուսն էլ միմիանցից երկնչելով, երկուսն էլ անհանգիստ:
Սուլթանուհին ամբողջովին քրտինքի մէջ լողալով տանջւում ու
տանջւում է աւելի, իսկ սուլթանը բոլորովին սառած զգումնք է
զգում իր կնոջ քրտինքի հպաւորութիւնից:

Երգը շարունակւում էր.

«Վերջապէս արքան, բռնապետ արքան, խմացաւ սէրը իր սի-
րուն կնոջ, տանջեց չարչարեց, շատ շատ չարչարեց, շատ ու շատ
տանջեց ազնիւ Լէյլային, թէ ինչո՞ւ է նա սիրում ուրիշին և ոչ թէ
իրան: Դահիճներ կանչեց, հրաման արձակեց...»

Լսեց երգչի ձայնը, լսեց և՛ նուազը: Նաֆիէ սուլթանուհին
հանգստացուցիչ մի շունչ քաշեց ու ո՛րիս բացականչեց, որ ժամանակ

Նրա աչքերից սկսեցին դուրս հոսիլ մարդարտանման արտասուքները : Նա յանդգնեց վերջապէս իր մի ձեռքը չարժեք, որ սուսանով արտասուքը սրբի, բայց անշարժ մնաց, վախկոտ գողանք կատարեցով որ իր գեղեցիկ կինը կամենում է իրան խեղդել իր վախիկ ձեռներով, յանկարծ բռնեց նրա կոկորդը, ամուր սեղմեց, չառ ա՛մուր սեղմեց, չոքեց նրա կրծքի վրայ և փորձեց խեղդել, ճիշտ այդ ժամանակ ներքին մի ուժից մըլամ ներքինապետը զարկաւ սենեակի դռանը : Կարմիր Գողանքը սթափուեց, իջաւ իր կնոջ կրծքի վրայից, ազատեց նրա կոկորդը իր ձեռքերի մէջից ու արագութեամբ մօտեցաւ դռանը ու բացաւ :

Ներքինապետը խոր գլուխ տալով յայտնեց, որ գնչուհին հաղուած, օծուած, լուացուած իր հրամաններին է սպասում : Արդիւ-Համբոյ հրամայեց նրան առաջնորդել Նաարիէյի սենեակը, ապա գալ ու Նաֆիէ սուլթանուհուն ուշքի բերել ու խիստ քննութեան ենթարկել համկանալու կամ բանալու համար այն դաւադրութիւնը, որին քիչ մնաց զոհ գնար Թուրքիայի տէրը :

Ներքինապետը հեռացաւ : Արդիւ-Համբոյ մօտեցաւ նուազած ու կապտած Նաֆիէյին, մի ուժեղ աղացի էլ իջեցրեց նրան փոքին ու դուրս գալով սենեակից դիմեց ուղիղ Նաարիէյի սենեակը, ուր գնչուհուն էլ պիտի առաջնորդէին :

Երբեք Վալարուհիներէի շատերն էին արժանացել Նաֆիէ սուլթանուհու և Նաարիէ Իգբալի բաղդին :

Դ .

Արդիւ-Համբոյ միտքը փոխեց կէս ճանապարհին և փոխանակ գնչուհու մօտ գնալու յետ դարձաւ, դուրս եկաւ կանանոցից, անցաւ իր բնակարանը եղող տախտակեայ մի փոքրիկ շէնքի առաջից և մի շարք ծառուղիներ կարելով հասաւ միայարկանի մի շէնքի առաջ : Նրան տեսող ներքինները, սենեկապանները և դահլիճները հետեցին նրան բաւական հեռուից և երբ նա բարձրացաւ միայարկանի շէնքի լայն սանդուխտներից, բոլորը կանգ առան սանդուխտների վրայ : Առաջ անցաւ միայն սենեկապետ Թուրխան-աղան :

Կէսօրը անց էր արդէն թէ և, բայց Երվանդի բարձունքների վրայ կղանակը այնքան մեղմ էր դարձեալ, որ մարդ ինքնիրան զգում էր զարնանային մի առաւօտ փրփրուն ծովի ափին ծովային մեղմ սիւքը շնչելիս : Միայարկանի շէնքի շուրջը կար ծառերի մի ներդաշնակ հաւաքածոյ, որ շէնքին տալիս էր խակկան ամառանոցի տեսք և որ յիսաւի կարելի էր ծառատանների ամենագեղեցիկն ու ամենահաւաքաբերականն համարել բազմազան ծառերով : Սուրբով անցնում էր ու թռչում ծառերի արանքով մեղմ քամին, որ գալիս զարնում էր շէնքի լուսամուտների թոյլ փեղկերին, որ շատաչելով ողբում էին նրա հարուածների տակ :

Արեւը, որ այնքան հպարտօրէն նայում էր բարձրից ու լուսաւորում ամբողջ քաղաքը, իր լոյսը հազիւ էր թափում շէնքի վրայ, նրան չըջապատող ծառերի միջով :

Արդիւ-Համբոյ իր գրպանից հանելով մի փոքրիկ բանալի բացաւ շէնքի դուռը և մտաւ ներս, ուր մի տհաճ խոնաւութիւն և զլւանք առթող խաւար դիմաւորեց նրան : Նրան հետեց միայն Թուրխան-աղան, որ նոյնպէս ներս մտաւ : Դուռը խեղդեց փակուեց : Սենեկապետը ելեքտրական մի կոճակով աղօտ լուսաւորեց, որ ժամանակ Արդիւ-Համբոյ գրեթէ խարխալելով առաջ անցաւ ու մտաւ մի մեծ սրահ, որի տեսքը սարափի կ'ազդէր անսովոր մարդու վրայ :

Ահագին սրահում միայն մի թիկնաթուղ կար, յոտակը բոլորովին մօրկ էր, թիկնաթուղի դիմաց պատի տակ 10-12 ամառամետր բարձրութեամբ տախտակներ կային դուռած, իսկ վարագոյրները երկաթեայ շերտաւոր կտորներ էին : Ոչ մի տեղից լոյս չէր մտնում ներս, ուր տիրում էր անթափանց խաւար ու գաղջ խոնաւութիւն : Հիւնքեարը միշտ իր սենեկապետի ելեքտրական լուսով առաջնորդւած դիմեց դէպի թիկնաթուղ ու նստաւ, մինչ սենեկապետը գաղային կառուցներից մէկը վառեց, որ սկսեց սենեակը լուսաւորել շատ աղօտ կերպով :

—Կանանոցում դաւադրութիւն է կազմակերպուած, Թուրխա՛ն, որի մէջ մատ ունեն Նաֆիէ սուլթանուհին և շատ կանայք ու ներքիններ: Պէտք է մի ժամուայ ընթացքում բոլոր յանցաւորները կամ դաւադիրները բռնուեն ու պատժուեն:

Սենեկապետը խոր գլուխ տուաւ:

—Նայիլ-բէյի կին Սարիբէին անմիջապէս այստեղ բերել տուէ՛ք:

Սենեկապետը կրկնեց իր խոնարհութիւնը:

—Դէլի-Ֆուատ փաշային իր որդիները հետ անմիջապէս ձերբակալել ու աքսորել դէպի Սիրիա:

Սենեկապետը դարձեալ խոնարհ գլուխ տուաւ ու հեռացաւ:

Հիւնքարը լուռ սպասեց մի քանի վայրկեան, ըստ իր արտաքին տեսքի, թիկնաթուր տակից հանեց մի գիրք ու սկսեց թղթատել կատարեալ ուշադրութեամբ դիտելով նրա մէջ գտնուող պատկերները: Երբեմն նրա դէմքը պայծառանում, երբեմն միմազնում էր, մինչ նա դիտում ու թղթատում էր գիրքը:

Յուշիկ քայլերով, գրեթէ սողոսկելով ներս մտաւ ու իր արքայի մօտեցաւ պալատան առաջին քարտուղար Սիւրիյէ-փաշան ձեռին մի թուղթ բռնած և ծունկ չոքելով նրա առաջ նրան ներկայացրեց իր ձեռի թուղթը: Հիւնքարը հրամայեց կարդալ:

«Թագաւո՛րս,

«Աստուծո՛ր Հայերը կոտորել տալուց յետոյ բոլորս էլ հաւատացինք, որ քո արեան ծարաւը յաղեցաւ և այլեւ կարիք չգիտի ունենաւ քո ձեռքերը նորանոր անմեղների արեամբ լուանալ, բայց Պօլսոյ վերջին դէպքերը, Բարը-Ալիի, Աղլիէ-Նազարէթի առաջ և Դիւան Եօլուի ու Նուրը-Օսմանիէյի հրապարակի վրայ գործուած նորանոր ոճրագործութիւնները դալիս են հաւատաւելու, որ քո մարդասպան ձեռքը դեռ կոչուած է շատ ու շատ ոճիրներ գործելու...

—Լո՛ւի՛ր, չո՛ւն, դուռաց հիւնքարը կատարեալ սրտմոռութեամբ ու մի փառաւոր ապստակ իջեցրեց իր առաջին քարտուղարի երեսին, որ խնայն ծունկ չոքեց ու փեշերը համբուրելով

—Կեանքս խնայեցէ՛ք, տէ՛ր, աղերսեց, ևս ձեր ոտքերի փոշին եմ, ձեր ոտերի տակ թաւարւող մի ճճու, մի որդ, ձեր հաւատարիմ ծառան:

Հիւնքարը նստել այլեւ չէր կարող, նա սկսեց պատել սրահի երկայնքը անհանգիստ ու մեծ քայլերով փրփրած կատաղի մի գազանի նման:

—Ո՛վ է այդ յանդուգն սողերը ինձ գրողը:

—Ձերդ աստուածաշուքութեան ու մարդասէր մեծութեան քեռայրը, Դամատ-Մահմուտ փաշան...

—Ստում կ'ս, ստահակ...

—Նա ստորագրել է ու կնքել իր սեփական կնքով:

Կատաղած դաւանը յափշտակեց իր քարտուղարի ձեռքից իր քրոջ ամուսնու գրած նամակը, ստուգեց նրա ստորագրութիւնը ու կնիքը և տահաութեամբ դէն շարեց:

—Կարդա՛, շարունակի՛ր կարդալ...

—Ձեր ոտերի փոշին չի յանդգնիլ աւելի առաջ գնալ, տէ՛ր:

—Կարդա՛, խստօրէն կրկնեց հիւնքարը:

«Պօլսում կատարուածները բաւական համարելով դու քո անձնական քարտուղարի ձեռքով հեռագրեցիր կայսրութեան ամէն կողմերը, որ անխնայ կոտորեն Հայերին...

«Ձեզանից պահանջում ենք յետ վերջնել ձեր այդ հրամանը: Թուրքիան ձեր սեփականութիւնը չէ, ոչ էլ Թուրքիացիները ձեր ստրուկները: Թուրքիան պատկանում է ե՛ւ մեզ, կայսերական տան բոլոր անդամներին, ե՛ւ Թուրքիայի բոլոր ժողովուրդներին: Ձեր մարդասպան քաղաքականութեամբ պիտի ստիպէք մեզ Հայաստանը, Մակեդոնիան ու Կրետէն էլ մեր ձեռից հանել և դարձնել ուրիշների սեփականութիւն, ինչպէս ձեր թագաւորութեան սկզբից մինչև հիմա տուիք Բօսնիա-Հերցեգովինան, Բուլղարիան, Արեւելեան-Բուլղարիան, Կիպրոսը, Եգիպտոսը, Դարան ու Արտահանը և այլն: Դուք, ոճրագործ, վերջ տուէ՛ք այլևս ձեր ոճիրներին...

Հիւնքարը կրկին յափշտակեց իր քարտուղարի ձեռից նամակը, պատուեց ու ցրուեց խոնաւ սրահի խոնաւ յատակի վրայ: Քարտուղարը ծունկ չոքեց ու սկսեց կրկին կեանք աղերսել:

Հիւնքարը ձեռքը անորոշ կերպով շարժեց, որին ի հաղանդութիւն քարտուղարը սողոսկելով դուրս եկաւ: Խեղճ մա՛րդ, երբ նամակը ձեռին նա ներս էր գալիս, ուրախ էր ու յուսալից, մտածելով որ դրանով Դամատ Մահմուտ փաշայի մահովճիւղը պիտի ստանայ, մինչդեռ դուրս գալիս հաւատացած էր, որ այդ նամակի ընթերցումը իր մահուան վճիռը արագացնելու էլ պատճառ դարձաւ:

Նա յուսահատ էր ու ընկճուած այլևս:

Թուրխան-ալան անմիջապէս ներս մտաւ ու սպասեց իր տիրոջ հրամաններին:

—Իսկոյն հրաւիրել առաջին քարտուղարին իմ բնակարանը և սուրճ տալ նրան:

Սենեկապետը խոր գլուխ տուաւ:

—Ձեմ՝ ուղում նաեւ, որ Դամատ Մահմուտ փաշան իմ երկրի սահմաններում ազրի, նոյնպէս ե՛ւ իր որդիքը:

Սենեկապետը կրկին գլուխ տուաւ և հեռացաւ:

Արդիւ-Համիտ դարձեալ մինակ մնաց խաւար ու խոնաւ սենեակում, մի քանի քայլ էլ առաւ սենեակի երկայնքը և նստաւ:

նոյն թիկնաթուռի վրայ: Նա յոգնեւ էր, ընկճուեւ: Երեք օր շարունակ յուզուեւ էր ու ամենայն էր, երեք գլխեր անքուն էր մնացել ու աշխատել և այնքան չէր յոգնել, ինչպէս իր քննադատի նամակը կարգալուց յետոյ յոգնեց: Այդ հրէշը իր կեանքի մէջ առաջին անգամն էր լսում ոճրագործ կոչումը, այն էլ իր հարազատ քրոջ ամուսնու բերնից: Նա, որ իր թագաւորութեան սկզբից մինչև վերջը, իր շուրջը միայն ահ ու սարսափ տարածեց, նա, որի հրամանը միշտ ու շարունակ եղել է մահ ու կախաղան, նա, որ քանդեց, հիմնադրեց կործանեց մի շէն երկիր, վերջապէս նա, որ իր հպատակներէ արեան մէջ լողալու միշտ, նա գիտէր, որ բոլորն էլ իրան համարում են ոճրագործ, բոլորն էլ իրան անիծում են, իր մահը ցանկանում, բայց ուղղակի իրեն ասում ոճրագործ կոչումը երբէք չէր լսէր, իսկ այդ կոչման հետ հին յիշողութիւնների տանջող պատկերներ էին ներկայանում իր առաջ:

Ընկողմանած մի գնդանի մէջ, մի թիկնաթուռի վրայ նա տեսնում էր գունատ դունատ, այլանդակաւոր դէմքեր, փչրուած կմախքներ, փոս ընկած աչքեր, արիւնաղօծ դիակներ, կարուած ոտքեր ու ձեռքեր, որ ծառանում էին իր առաջ ու անցնում արագարար իրար ետեւից, իրարից աւելի արագ վազելով, իրար կանխել փորձելով: Կենդանի մարդկանց այդ մնացորդները իր ձեռների գործերն էին, իր աաղանդի արտայայտութիւնները, որոնք այնքան գեղեցիկ էին վեր հանում իր հողու ամբողջ այլանդակութիւնն ու սեւութիւնը:

Աբղիւլ-Համիտ տանջուած էր, նեղուած, ցանկանում էր հեռանալ այդ սենեակից, բայց չէր կարողանում: Բաւական երկար տեւեց նրա աչքերի առաջից անցնող դիակային ու կմախքային թափօրի երթևեկութիւնը, մինչև որ նա ընկճուած, խորտակուած սկսեց քնել անհանգիստ ու վրդովւած:

Երկին ներս եկաւ Թուրխան-աղան և տեսնելով, որ իր ամենազօր տէրը քնած է, ցանկացաւ դուրս գալ: Հիւնքեարը դարձեւ, նայեց իր շուրջը, տեսաւ իրան չըջապատող դիակների մէջ իր սենեկապետին, կանչեց նրան իր մօտ ու հրամայեց իրան առաջնորդել իր կապինէար:

Սենեկապետը փոխանակ նրա հրամանը կատարելու սկսեց գեկուցանել:

— Կանանդոցում գոյութիւն ստացած դաւադրութեան գլխաւորները ձերբակալուած են, որոնցից է և՛ Նաֆիէ-Սուլթանուհին:

Գաղանը սթափուեց:

— Յետոյ:

— Դէլի-Փուտար ձերբակալուած է ու կեղերմական բանտ առաջնորդուած, վաղը կը ճանապարհուի Սիրիա իր որդիների հետ:

Գաղանը սկսեց հրճուիլ:

— Յետոյ:

— Ձերդ մեծութեան առաջին քարտուղարը մահամերձ հիւանդ է, իր սեպական կառքով տուն ուղարկեցինք, վերջին աղօթքը կատարելու համար էլ Համիդիէ մզկիթի հօջաներից մէկը ղրկեցինք:

— Նրա թաղման ծախսը իմ հաշուին պիտի կատարուի:

Սենեկապետը գլուխ տուեց ու շարունակեց.

— Սարիբէն մի քանի ըոպէ յետոյ ձերդ մեծութեան կը ներկայացուի, եթէ հրամայէք, նա պալատումն է:

Գաղանի հրճումն քը շատացաւ:

Սենեկապետը լռեց, գլուխ տուաւ, դարձեալ գլուխ տուաւ ու շարունակեց անհանգիստ լուսթիւն պահպանել:

Աբղիւլ-Համիտ կատաղեց, վրդովւեց, անհանգստացաւ:

— Իսկ Գամատ-Մահմուտ փաշան, այդ շունն ու իր լակտները, հարցրեց խտօրէն:

— Նրանք փախել են մայրաքաղաքից, տէ՛ր...

— Շուն, ինչո՞ւ դանդաղեցրիր իմ հրամանի կատարումը:

— Ձեր ոտերի փոշին ժամանակին կատարեց ձեր հրամանը, բայց նա արդէն հեռացել էր ձեր նամակը նամակաբերին յանձնելուց յետոյ:

Եւ ծունկ չոքեց նրա առաջ ու երկիրպագել սկսաւ:

Հիւնքեարը կատաղած մի քանի քայլ տուաւ, հայհոյեց ու կանգ առաւ:

— Բերել այստեղ քրոջս, այդ քածին, որ չկարողացաւ իր ամուսնու ու իր որդիների շարամտութիւնները ժամանակին գուշակել և ինձ յայտնել:

Սենեկապետը խոր գլուխ տուաւ ու կրկին գետնը համբուրեց:

— Ոչնչայնել բոլոր նրանց, որոնց ձեռքով անցել է ինձ ուղարկուած նամակը:

Սենեկապետը կրկին գլուխ տուաւ:

Երրորդ հրամանը Գաղանը ձեռքի մի շարժումով տուաւ:

Սենեկապետը խոնարհ գլուխ տալով ու սողոսկելով հեռացաւ:

Աբղիւլ-Համիտ նստեց թիկնաթուռի վրայ ու սկսեց մտածել, ուսնեց սակայն իրան հաշիւ տալու, թէ ինչո՞ւ համար է մտածում:

Ներս բերին Նաֆիէյին երկար սպիտակ մի հագուստի մէջ: Նա գունատ էր, մահաւան սարսափը դէմքին, դժգոհութիւնը այտերին ու արհաւիրքը աչքերին: Երկու ժամուայ մէջ նա մի ամբողջ դար էր ապրել և առաջուայ գեղեցիկ կնոջ տեղ, մի իսկական աստուածուհու փոխարէն, այժմ Կարմիր Գաղանի առաջ կանգնել էր մի իսկական ուրուական: Սուլթանուհին զգում էր, որ ինքը պիտի մնանի, նա չէր վախենում մահից, նրան սարսափեցնում էր միայն այն

միտքը, թէ կարող են իրան անպատուել ու չարչարել: Կարմիր Գազանը տեսնելով նրան՝ աչքերը խոնարհեցրեց ու չյանդգնեց նայիլ նրա դէմքին:

Նափիչէին ներս էին բերել երկու կարմրազգեստ ալբանացի դահիճներ ահարկու դէմքերով, ամենազղւելի դահիճների իսկական արտայայտութեամբ, հսկայ, երկարհասակ, վայրենի: Թուրխան-աղան նրանց առաջնորդել ու հեռացել էր:

Աբդիւլ-Համիտ շարունակում էր լուռ գեանին նայիլ: Դահիճները կանգնած էին սուլթանունու երկու կողմը: Նափիչէն արտասուում էր անձայն ու լուռ:

Շարժուեց մեծ դահապետի ձեռքը: Փայտի երկու ուժեղ հարուածներ խոնարհեցրին, ծունկ չոքեցրին խեղճ սուլթանունուն, որ սկսեց աւելի շատ արտասուել: Աբդիւլ-Համիտ սպասում էր աղերսի, խնդրքի, որ վերջնական վճիռը տայ, բայց սուլթանունին չուզեց աղերսել, նա վստահ էր, որ իր աղերսը պատճառ պիտի դառնար իւր կրելիք պատիժների արագացման: Դահիճները կանգ առան:

Կրկին շարժուեց դահապետի մատը, հարուածները կրկնուեցին, գեղեցիկ կինը ընկաւ յատակի վրայ:

— Յայտնի՛ր բոլոր ընկեր-ընկերուհիներիդ անունները, լսուեց հինքեարի ձայնը, որ դադանի մանչոյի արձագանքը տուաւ կիսախաւար սրահում, յայտնի՛ր, ո՞վքեր են քո ընկեր-ընկերուհիները և քեզ կը ներեմ:

Գեղեցիկ սուլթանունին ոչինչ չխօսեց:

Գազանը կատաղեց: Նրա ձեռքը դարձեալ շարժուեց: Դուրս գնաց դահիճներից մէկը և մի կատու ու մի պարկ ձեռքին վերադարձաւ:

Սուլթանունին ոչինչ չտեսաւ, նա լուռ աղօթում էր:

Աբդիւլ-Համիտի ահուելի ձայնը կրկին լսուեց, այս անգամ կարծես գերեզմանի խորքերից:

— Յայտնի՛ր դասակիցներիդ անունները, թէ չէ կը մեռնես:

Սուլթանունին կրկին չպատասխանեց:

Գազանի ձեռքը կրկին շարժուեց: Սուլթանունուն կոխեցին պարկի մէջ, կատուն էլ ձգեցին նրա հետ ու պարկի բերանը կապեցին: Նոյն իսկ Համիտի պէս մի գազան չէր կարող ականատես լինել այդ զղւելի պատժին իրադրման, ուստի հրամայեց դուրսը դուրս գալ այդ պատժը: Մեր գրիչը անգոր է նկարագրել մի պատժ, որի յիշողութիւնն անգամ մեզ արտասուք ու զղւանք է պատճառում:

Ներս մտաւ Թուրխան-աղան:

— Նափիչէյի բոլոր դասակիցներին անխնայ չարչարել իրենց բն-

կեր-ընկերուհիների անունները խմանալու համար, եթէ չյայտնեցին բոլորին էլ սպաննել:

Սենեկապետը գլուխ տուաւ, ապա յարեց.

— Այստեղ է ձեր քոյրը...

Կարմիր Գազանը հրամայեց բերել իր ներկայութեամբ:

Սենեկապետը գլուխ տուաւ ու շարունակեց.

— Նամակը բերողները բոլորը ձերբակալւած են:

— Ցանկալի է, որ նրանք ցամաքի վրայ չապրին:

Սենեկապետը գլուխ տուաւ ու հեռացաւ:

Ներս առաջնորդեցին Գազանի հարազատ քրոջը, յանդուգն Մանուս փաշայի կնոջը, որ կայսերազուն իշխանունուն վայել հազնուած մօտեցաւ ու համբուրել ուղեց իր եղբոր ձեռքը:

— Անիծուած աղջիկ, ինչո՞ւ ինձ չյայտնեցիր քո ամուսնու ու քո որդիների փախուստի մասին:

— Միթէ՞ նրանք փախել են, իրական դարմացմամբ հարցրեց իշխանունին, որ յիրաւի չէր խմանում նրանց փախուստի մասին:

— Կեղծել ե՞ս սովորել, ջատո՛ւ:

— Քո աղախնը, տէ՛ր, կեղծելու կարիք չունի, եթէ սուտ եմ ասում, թո՛ղ Աստուած երկու աչքերս կուրացնէ և որպէս սողուն գետնի վրայ պտրոցնէ:

— Փոխանակ Աստուծու, այդ բանը ես կանեմ, եթէ դու չխոստովանուես ամբողջ ճշմարտութիւնը:

Իշխանունին անելանելի դուրսեան մէջ էր: Նա մի կողմից տանջւում էր այն մտքով, թէ իր հարազատները փախել են և ինքը չգիտէ ո՞ւր են գնացել նրանք, իսկ միւս կողմից այն մտքով, թէ այժմ չարչարանքի, զուցէ և՛ խոչտանքի է ենթարկւելու իր եղբոր կողմից իր չգործած յանցանքի համար: Նա նոյնիսկ սկսեց արտասուել:

— Լութի՛ր, քա՛ծ, և ասա՛ ինձ ճշմարտութիւնը:

Իշխանունին շարունակում էր արտասուել: Կարմիր Գազանը կանգնեց, մօտեցաւ նրան ու սպառնաց մահուամբ:

— Նրբ քեզ ասում եմ, չգիտե՛մ, կը նշանակէ չգիտեմ, այս է ճշմարտութիւնը, իսկ եթէ դու կամենում ես անպայման ինձանից լուծել իմ ամուսնու ու որդիների վրէժը, այդ կարող ես, ես ճշմարտութեան համար պատրաստ եմ մեռնել:

— Դու սուտ ես խօսում, դուայ եղբայրը:

— Բացարձակ ճշմարտութիւնն եմ ասում, կրկնեց քոյրը:

Աբդիւլ-Համիտ տպաւորեց նրան ու կրկին տպաւորեց մահուամբ: Իշխանունին ամօթից կարմրեց ու դուաց:

— Չյանդգնես աւելի առաջ գնալ, ես էլ նոյն թաղաւորի որդին եմ, որի որդին ես դու...

—Դու մեր հօր ապօրինի զաւակն ես, պոռնի՛կ, թքնելով նրա երեսին գոռաց եղբայրը:

—Նրա ապօրինի զաւակը դու ես, գազա՛ն, մենք, ես, Մուրատը, Ռէշատը նրա խակական զաւակներն ենք, հարազատ զաւակները մեր մեծահոգի հօր, մինչդեռ դո՛ւ, դու մի սեւահոգի հրէշ ես...

Արդիւլ-Համիտ յարձակուեց իր քրոջ վրայ գրպանից մի մտրակ հանելով: Իշխանուհին իր կողմից յարձակուեց իր եղբոր վրայ ու Արդիւլ-Մէջլիւի երկու որդիքը սկսեցին իրար ծեծել: Եղբայրը տեսնելով որ իր քրոջ կանացի ուժի առաջ իսկ տեղի է տալիս, յետ քաշուեց, հրամայեց, որ իր ներկայութիւնից և իր պալատից կորչի նա ու ծեծուած շան նման յետ դարձաւ ու գնաց թիկնաթռի մէջ ընկաւ:

Իշխանուհին խորապէս վշտացած, խոր խոցուած սրտով, անպատուութեամբ, կիսախելագար դարձած մօտեցաւ իր եղբորը, թքեց նրա երեսին ու.

—Սնալիտան, ասելով հեռացաւ սենեակից:

Ներս մտաւ սենեկապետը:

—Այս կինը իմ երկրի սահմանների մէջ չալիտի ապրի:

Սենեկապետը, որ իր ամբողջ կեանքով երախտապարտ էր իշխանուհուն, խոր գլուխ տուաւ, ծունկ չոքեց, համբուրեց գետինը ու ասաց.

—Նա յղէ է, իսկ աստուածային օրէնքը յանցաւոր չի ճանաչում որովայնի երախտներին... բայց ե՛ւ աջնապէս հրամանը Ձերդ Մեծութեանն է:

Արդիւլ-Համիտ ձեռքի մի շարժումով հրամայեց նրան կանգնել, թուրխան-աղան ուրախ էր:

Արդիւլ-Համիտ դանդաղ քայլերով ու մտամոլոր դուրս եկաւ սենեակից, նրան հետեւեց սենեկապետը: Նա նոյնպէս մտամոլոր իջաւ լայն սանդուխներից շէնքի դուռը իր իսկ ձեռքով փակելուց յետոյ ու դիմեց դէպի իր բնակարանը: Դրան առաջ կանգնած բազմութիւնը հետեւեց նրան մինչև նրա բնակարանի դռները: Սենեկապետը միայն նրա հետ բարձրացաւ նրա առանձնասենեակը, ուր կայսրը մի քանի րոպէ սպասելուց յետոյ անցաւ մի քանի սենեակներ, մինչև հասաւ դարձեալ մի մութ ու աղքատ կահաւորուած սենեակ: Նրան շարունակ հետեւում էր իր սենեկապետը:

—Սաքիբէին պահեցէ՛ք կանանոցում, կէս գիշերից յետոյ ինձ ներկայացրէ՛ք:

Սենեկապետը խոր գլուխ տուաւ:

—Այսօրուայ գնչուհուն առաջնորդեցէ՛ք ինձ մօտ:

Սենեկապետը կրկին գլուխ տուաւ:

Արդիւլ-Համիտ շարժեց ձեռքը: Սենեկապետը դուրս եկաւ:

Գնչուհին մի քառորդ ժամ յետոյ արդէն կայսերական մահճակալի վրայ պառկած կայսեր սիրալիր շնորհքներին էր արժանանում ու իր թունալից շրթներով կանանոցի շատ սիրւած տիկիներին հասցէին բանասարկութիւններ անում:

Արդիւլ-Համիտ լսելով նրա բանասարկութիւնները քնեց նրա կրծքի վրայ:

Գնչուհին ուրախ էր, անհունապէս ուրախ: Պօլսոյ սալայատակներից ազատւել ու կայսրուհի էր դարձել:

Ե .

Սաբիրէն, Նայիլ-բէյի գեղեցիկ կինը, Հաֆիզ-Հիւսէյին փաշայի աննման աղջիկը, որի առաջ խոնարհուել էին բարձրաստիճան գիւղ-լօմասներ ու սէր մուրացել, որ թողել էր հանգիստ ու ճոխ կեանքը ու յեղափոխական դարձել և որ պահում էր իր սրտի խորքերում շատ ու շատ ջերմօրէն ժիրացր Վասակեանի յիշատակը, նա, որ չէր բնկրկել ո՛չ մի դժուարութեան առաջ, կոխտուել էր ամեն անսակի ու ձևի նախապաշարումներ ու անյողգորդ առաջ էր ընթացել իր իսկ գծած ազատութեան կուռի չաւղով, այժմ արդէն գտնուում էր Կարմիր Գաղանի որջում, Երլըզ-քէօշկում, Արդիւլ-Համրտի ան-միջական իշխանութեան տակ :

Սաբիրէին չէր վախեցրել իր ձերբակալւելուց մինչև այդ օրը կրած տանջանքները, չէր վախեցնում և՛ հաւանական մահը, որ վի-ճակւելու էր նրան անօրինակ բռնութիւնների օրրանում, միայն նա զգում էր ճնշող, խեղդող, հեղձուցիչ հիասթափումն ու յուսահա-տութիւն նրա համար, որ իր բոլոր ջանքերը, ինչպէս և՛ իր բնկեր-ների բոլոր աշխատութիւնները չկարողացան որոշ հետեւանք ունենալ ու իրենց համակիր ու հետևող խմբեր պատրաստել թուրք տարրի մէջ, որ այնքան սղիտօրէն գործիք դարձաւ սուլթանի արբանեակ-ների ձեռքը ու անխնայ կոտորեց հայերին, ճիշտ նրանց, որոնց էր վիճակւած երկրի բարեկրօնական սկզբնապատճառներ դառնալ :

Իր այդ յուսահատութեան ու հիասթափման բոլէներին եթէ նա որեւէ միտիմարութիւն ու հոգեկան հաճոյք զգում էր, այդ էր իր յիշողութիւնը իր անցեալի մասին : Զերբակալած երբ նրան առաջ-նորդեցին Թօփ-հանէի պալատը ու այնտեղ մի սենեակի մէջ մինաէ-թողելով իր առաջնորդները հեռացան, նա ժամանակ ունեցաւ կրկին և կրկին վերլիչելու իր ամբողջ անցեալը իր մանկութիւնից մինչև Թօփհանէ մտնելը :

Ի՞նչ լաւ անցեալ ունէր նա, ի՞նչ բարձր էր նրա կեանքը, ինչ-պիտի փառաւոր յեղաշրջման էին ենթարկուել նրա հոգին ու միտքը :

Նախկին սպարապետի սպարանքում մեծացած անհոգ ու հրճւուն նա անց էր կացրել մի ուրախ մանկութիւն, երբ միայն ու միայն մտածել էր իր գեղեցկութեան ու իր պճնանքի մասին :

Եւ երբ, որպէս պատանի, նա արդէն խելահաս էր եղել ու գի-տակցել այն սլոք, որ իր գեղեցկութիւնը սուել է իրան, Սաբիրէն մտածել էր այլևս միայն ազատամիտ, խելօք ու բոլոր իրան չըմա-պատողներից բարձր մի մարդու էլինը լինել, որով պիտի պարծնեար

ինքը և որ իրան պիտի թոյլատրէր Լուրպայի մի կնոջ նման ազատ ու համարձակ ապրել :

Նա յիշել էր՝ Թօփհանէի իր առանձնասենեակում՝ իր պատանե-կան այն չըմանը, երբ սէրը նոր նոր է բոյն դնում մատաղատի կուրծ-քերի տակ, երբ սիրած էտիի իւրաքանչիւր շարժումն ու հայեացքը զող ու սարսուռ և հաճոյք ու նուաղում է ազդում սիրողին, երբ աշխարհն ամբողջ պարփակւում է մի էակի մէջ, որ աստուածանում է, յաւիտենականում է : Շատերն էին խոնարհուել Հաֆիզ-Հիւսէյին փաշայի հպարտ ու աննման աղջկայ՝ առաջ, շատ երիտասարդներ էին կամեցել գրաւել նրա սէրը, բայց բոլորից բաղդաւոր էր եղել Նա-յիլ-Բէյը, մի համակրելի ու սիրելի երիտասարդ, Լուրպական կրթու-թեան տէր, զարգացած, ազատամիտ : Սաբիրէն իր ընտրած տղա-մարդու մէջ գտել էր ամեն ինչ, բոլոր այն յատկութիւնները, որ ինքը փնտռել էր որեւէ տղամարդու մէջ և սիրել էր նրան, սիրել բուռն, կրակոտ, կրքոտ սիրով, սիրել այնքան, որ հակառակ իր ծնողների կամքին ամուսնացել էր նրա հետ :

Իսկ ամուսնութիւնից յետոյ... հիասթափումն ու յուսահատու-թիւնն էին եղել նրա բաժինը, Նայիլ-Բէյը առաջին կին ունէր ու ստիպւած էր իր սէրը երկուսի մէջ բաժնել, մինչդեռ Սաբիրէն կա-մանում էր սիրուել նրանից ինքը մինակ, նրա հոգու բոլոր զօրու-թեամբ, նրա մարմնի բոլոր ուժերով : Եւ երբ իր սիրող ու սիրել ջանկարող հոգին բաւականութիւն չգտաւ ամուսնական կեանքում, ընտանեկան յարկի տակ, նա ստիպւեց այդ բաւականութիւնը, այդ հաճոյքը փնտռել դուրսը, հեռուն, մեծ մասամբ Պերսիայում :

Օ՞՞, այն ինչ խայտառակ ու ազնիւ կեանք էր Սաբիրէն վա-րում մի քանի տարի շարունակ, ի՞նչպէս էր ստորացել նա, իրանում մնալ էին ամեն ինչ, որ մարդկային էր ու աստուածային և յարու-թիւն էր առել ամեն ինչ, որ դադանային էր ու անամուսնան : Նա սիրահարներ էր փոխել մինը միւսի յետեից, նա անձնատուր էր եղել շատերի կրքերին, դարձել էր մի խաղալիք, մի իր, հաճոյքի մի գոր-ծիք, որից օգուտում էին մարդիկ և որին փաղաքում էին միայն, երբ դեռ չէին յագեցրել իրենց կրքերը, իսկ յետոյ... թողնում էին նրան երեսի վրայ ու անցնում, հեռանում :

Հաֆիզ-Հիւսէյին փաշայի աղջիկը, որի իւրաքանչիւր քմահա-ճոյքը հրաման էր անդառնալի և իւրաքանչիւր շարժումը օրէնք ան-փոփոխելի, ինքը դարձել էր ուրիշի կամքի ու կրքի գերի, ուրիշի հրամանների ստրուկ ու օրինապահ անամուսնական սիրոյ օրէնքների նկատմամբ : Ընկել էր Սաբիրէն, շատ էր ընկել, ինքն զգում էր ազդ, թէեւ ոչ ոք չէր յանդգնում իրան այդ տակ : Բայց վերջա-պէս մի օր, մի ֆրանսիացի Բարօն յիշեցրեց իրան, որ ինքը հաճոյ-

քի մի գործիք է և ո՛չ զգայուն էակ կամ սիրող կին։ Սաբիրէն զգուեւ էր այդ օրը ինքն իրանից ու ատել իրան, զգացել իր անկման չափը ու որոշել անպատճառ հաւատարիմ ամուսին ու սիրող կին դառնալ, նա ինդրել էր Նայիլ-բէյին ներել իրան, սիրել իրան, միայն, միայն իրան սիրել, բայց մերժում էր ստացել։

Ճիշդ այդ ժամանակները Սաբիրէն, անման, անառակ, մոտամուր ու տանջւող Սաբիրէն պատահել էր ժիրայր Վասակեանին, ժիրայր էֆէնտին, հայ յեղափոխականների այդ պետին, այդ զօրավարին։ Այդ հանդիպման օրը Սաբիրէն կեանքի ամենաերջանիկ օրն էր, ինչպիսի յուզում ու զգացումների յորդում, ինչպիսի վեհօթիւն ու իր արժանապատուութեան գիտակցութիւն չէր զգացել նա... Սաբիրէն իր կեանքում առաջին անգամն էր սկսում սիրել, այն էլ այնպիսի ուժեղ ու հուժկու սիրով, որ մեռցրեց իր մէջ իր կիրքն ու ցանկութիւնները, որ խեղդեց իրանում այն բոլոր զգացումները, որ երբեք է ունեցել էր, որ վերջապէս վերջ տուաւ իր անառակութեան, որի հետ ե՛ւ իր ստորացման ու իր մէջ ներշնչեց իսկական մարդկային գիտակցութիւն։

Ապա Սաբիրէն յիշել էր իր Տ. գնալը, ժիրայրին աւելի մօտեւնալը, իր յեղափոխական դառնալը, իր կատարած առաջին կազմակերպութիւնները, իր քարոզութիւնները, վերջապէս իր փախուստը, իր հայկական մի վանքում առանձնանալը, վերջապէս ժիրայրի կախաղանը... Շաքէի սպանութիւնը...

Թող կինը, արդէն հերոսուհի դառնալու ուղիի վրայ էր կանգնել, մանաւանդ երբ որպէս օրինակ նրան ծառայում էին Վասակեանն ու Շաքէն, այդ երկու ուժեղ անհատականութիւնները, որ ինչպէս իրենք իրենց, նայեալս ե՛ւ Սաբիրէն էին աստուածացրել։

Սաբիրէն յիշել էր ե՛ւ իր Պօլիս վերադառնալը, իր քարոզութիւնները, իր կրած հալածանքները, վերջապէս Մէլէկի տան խնձոյքը, հայկական ցոյցերը մայրաքաղաքում ու նրանց անմիջական հետեւանքը եղող հայկական կոտորածները։⁽¹⁾

Սաբիրէն ունէր մի փառաւոր անցեալ, նա գո՛հ էր ինքնիրանից, նա բաւականաչափ գործ կատարել էր, սակայն կար մի բան, որ նրան հիասթափում ու յուսահատութիւն էր առթել և այն բանը էր երիտասարդ թուրք եղբայրների անտարբեր վերաբերմունքը դէպի հայկական ջարդերը և խաւարամիտ ամբոխի մանակցութիւնը այդ ջարդերին։

— Ինչքան յետ են մնացել դեռ թուրքերը, ինչքան յետ են մնացել դեռ ե՛ւ հայերը, իսկ եւրոպացի չարչիւնները, միթէ՞ նրանք

(1) Տե՛ս իմ «Սաբիրէն» վէպը։

յետ չեն մնացել։ Ինչպէ՞ս կարելի է սպաննել մարդկանց, ոչնչացնել նրանց անհատականութիւնը, արգելք դառնալ նրանց նախաձեռնութիւններին։ Չէ՞ որ բոլորի աշխատութեանց ու երկունքի արդիւնքը միասին պիտի ստեղծեն ապագայ դրախտը երկրիս վրայ։ Ինչո՞ւ, ինչո՞ւ այս սոցիալութիւնը մեր մէջ...

Սաբիրէն իր ձերբակալուած բռնակցի սկսած մինչեւ ելլելը առաջնորդուելը շարունակ նոյն բանն էր մտածում և որքան շատ էր մտածում, այնքան աւելի էր լքում զգում։ Բայց արդէն ելլելը մնն էր, Կարմիր Գաղանի որջում, խալիֆայի ու սուլթանի հետ միեւնոյն յարկի տակ։ Պալատ մտնելու վայրկեանից սկսած մինչեւ սուլթանի բնակարանը հասնելը նա շատ ու շատ բաներ տեսաւ և կրկին ու կրկին համոզուեց, որ մարդիկ աւելի ստորացած են պալատներում և կրկին համոզուեց, որ մարդիկ աւելի ստորացած են իրականութեւնում քան գիւղական խրճիթներում ու բանտարանի հիւղակներում։

Վերջապէս Հաֆլը-Հիւսէյն փաշայի աղկան ներկայացրին Կարմիր Գաղանին, որ սուրբ վրայ ընդունեց նրան շատ խորթնիկ արամադրութեան մէջ, որովհետեւ գնչուհի-սուլթանուհին նրա ամենուրեք վստահելի կիներն էր դարձել և անձնական զանազան նախարարը նոր ոսկիներ էր փոխադրել գերմանական բանկը, օսկիներ, որ արժէքն էին մայրաքաղաքում թալանուած հայ խանութների։

Վախկոտ կայսրը թէեւ կը ցանկանար առանձին խօսել Սաբիրէյի հետ, բայց որովհետեւ շատ բան էր լսել նրա անվահերութեան ու քաջութեան մասին, վախեցաւ նրանից ու ուրիշներին ներկայութեամբ կամեցաւ խօսել նրա հետ։

Սաբիրէն մտնելով կայսրի ստանձնամենակը, ձգեց իր վրայից ֆէրաշէն և եւրոպական զեղեցիկ տարազի մէջ զեղեցիկօրէն սանտրուած մազերով ու զրաւիչ դէմքով ներկայացաւ խալիֆային առանց ամօթի ու երկիւղի որ և է արտայայտութիւն իսկ ցոյց տալու։

— Ծածկի՛ր երեսդ, թշուա՛ւ, ասաց մեծ սենեկագետը, որ կանգնած էր իր յետեւ, ծածկի՛ր երեսդ և աղբսի՛ր։

Սաբիրէն նայեց նրան հալարաօրէն, նոյնպիսի հալարաութեամբ էլ նայեց սուլթանին ու կանգնած մնաց իր տեղը զլուխը բարձր, ինքնավստահ, յանդուգն, անյողորդ։

Կայսրը ընկրկեց, զայրացաւ։

— Կի՛ն, դու մուսուլման ե՛ս...

— Այո՛, բայց մուսուլման ստելով ես չեմ հասկանում այն, ինչ որ դուք բոլորդ էք համկանում, ես մուսուլման եմ, այո՛, որովհետեւ դէն եմ չարտել ինձանից մինչեւ այժմ ձեզ վրայ գտնուող բոլոր նախապաշարունակներն ու բարոյական-կրօնական կեղծ հասկացողութիւնները, որովհետեւ ատել եմ ամեն տեսակի բռնութիւն ու կռուել մարդ գաղանների բոլոր զաղանութիւնների դէմ։

Սարիբէն խօսում էր բարձր, իւրաքանչիւր բառի վրայ չեղտելով, հայեացքը շարունակ իր չրջապատողներին ուղղելով: Նա տեսել էր Վասակեանին կախաղանի առաջ, նա տեսել էր Շաքէյի անկումը սարերից ու ապառաժներից ներքեւ, ինքը ոչնչով պակաս չէր նրանցից, ինչ անկնք, որ իր հետ խօսողը ձիւղ այն մարդն է, որ պարիսպների յետեւ թաղնուած արձակել է իր հրամանները:

—Կի՛ն, դու յեղափոխական ե՞ս:

—Այո՛:

Սուլթանը յետ քաշուեց, այդ կնոջ «այո՛»ն աւելի մեծ ազդեցութիւն գործեց նրա վրայ, քան գործել էին երեք օր առաջ Պօլտում արձակուած հրազէնները: Մինչեւ այդ օրը Սքըլիւ-Համիտ չէր տեսել մէկը, որ յանդգնէր իր ներկայութեանը ստելու, որ ինքը յեղափոխական է: Ի՞նչ ոյժ կար այդ կնոջ մէջ, ինչով էր նա պաշտպանուած, որ բռնապետութեան այդ որջի մէջ յանդգնում էր այնքան անվեհեր ու աննկուն լինել:

—Ո՛ւմ աղջիկն ես դու, հարցրեց խուլ ձայնով վախկոտ հիւնքեարը առանց նրա երեսը նայիլ համարձակուելու:

—Ես աղջիկն եմ մի մարդու, որին ի դուր սպաննել փորձեցին դարերի բռնապետները և ի դուր փորձում ես դու էլ, ես ինքս իմ հայրս եմ ու իմ մայրը, և միեւնոյն ժամանակ իմ աղջիկն ու թուրը: Ես ամեն ինչ եմ, թագաւոր, աւելի մեծ թագաւոր քան դու ես, ես մի անհատ եմ, որի մէջ բարի կամքը աւելի գերիշխող է քան կիրքն ու վախկոտութիւնը, ես այն աստուածն եմ, որ խորտակել եմ շատ բռնապետութիւններ և որի առաջ դու էլ ես ընկրկում, խոնարհուած ու ոչնչանում... Ես մարդ եմ... մի էակ... բայց ե՛ւ մի տիեզերք...

Սքըլիւ-Համիտ աւելի էր ընկճւում, քանի աւելի շատ էր լսում իր հանդէպ որպէս յանցաւոր առաջնորդուած կնոջ: Ներկայ եղող բազմաթիւ պալատականներն էլ տալած էին, չէին կարողանում բացատրել այդ կնոջ յանդգնութեան պատճառը և նրա մէջ գտնում էին մի գերբնական ոյժ, որ ոչ մի մարդ չուներ: Սարիբէն հպարտ էր ու գոհ, նա զգում էր իր գործած ազդեցութեան չափը և հաւատում էր, որ իր ունկնդիրներից գոնէ մէկը պէտք է իր երկիրպագունը դառնայ:

—Ի՞նչ է քո դաւանանքը, լսուեց վախկոտ հիւնքեարի աւելի մեղմացած ձայնը:

—Այն, որ պիտի խորտակուեն բոլոր բռնապետութիւնները, որ մարդը մարդուն դադան լինելուց պիտի դադարի, որ կրօնականազգային, սեռական ու դասակարգային խտրութիւններ այլ եւս հպիտի լինեն, որ մարդը դառնալու է կոտորեալ մարդ, իսկական

ստեղծագործող, երկնող, աշխատող մարդ և վերջապէս այն, որ մարդը աստուածանայ պիտի, ձիւտ այնպէս, ինչպէս աստուածացել եմ այժմ ես ու ինձանից առաջ շատեր:

—Դու ուրեմն աստուած ե՞ս:

—Այո՛, մի ուժեղ աստուած, որի առաջ խոնարհելու ես դու, աշխարհի բռնաւորներից ամենաբռնաւորը... ինչիսկ այժմ էլ ես խոնարհել... մի ուժեղ աստուած եմ ես, որ պահել եմ բոլոր ոճրագործների ձեռքը ու պատժել նրանց և պիտի պատժեմ քեզ էլ, Կարմիր ոճրագործ...:

Անյաղթ հիւնքեարը ընկաւ աթոռի վրայ ուժասպառ ու գունատ: Սարիբէն միշտ կանգնած միեւնոյն տեղը և միեւնոյն դիրքի մէջ խօսում էր ու նայում իր շուրջը: Նրա աչքերի մէջ փայլում էր աստուածային մի հուր, որ անշէջ է միշտ, դա յեղափոխական գաղափարի հուրն է, որ դարեր շարունակ շատ սրտեր է հրահրել և շատ սրտեր էլ դեռ հրահրելու է: Նրա դէմքը պայծառ էր ու զուարթ և այնքան գեղեցիկ, որի առաջ երկիրպագելու պատրաստ կը գտնուէին ինչիսկ ամենազուարճած աստուածները: Նրա շրթների վրայ փայլում էր ու խաղում մի ժպիտ շուշանից գեղեցիկ, վարդից փարթամ, մանուշակից համեստ ու մեխակից չքեղ, որի նմանը ոչ մի բանաստեղծ ու վիպասան երեւակայել իսկ չէր կարող: Նրա հարուստ կուրծքը բարձրանում էր, որպէս հրաբուխ բոցալառ, ուժեղ, հոյակապ, հիասքանչ, որ լոյս ու ջերմութիւն էր սփռում շուրջը, իսկ այդ հրաբուխի վրայ գտնուող սալնքները գեղեցիկ կօրսածի տակից երեւում էին որպէս բարձրաբերձ ու անյաղթելի, անպարտելի աշտարակներ, որոնք ամենաերկար ու ամենախիստ պաշարման իսկ չեն ենթարկուիլ, իսկ նրա գեղեցիկ, հոյաչէն, համաչափ ու վսեմ հասակը հիմալայեան սարերի տոկունութիւնն ու վեհութիւնը ունէր, որի աչքերի առաջ շատ ու շատ մարդկութիւններ ու աղգեր են ոչնչացել ու ոչնչանալու են: Անյաղթ հիւնքեարի անյաղթ արքանահակները զգում էին բոլորն էլ իրենց տիրոջ ապիկարութիւնն ու նրա անպայանի վեհութիւնը և արգահատելով առաջին հիանում էին երկրորդով:

Սքըլիւ-Համիտ ձեռքը շարժեց: Սարիբէն առաջնորդեցին սենեակից դուրս: Հիւնքեարը մնաց միմակ ստորացած, վեհերոտ, կառկածոտ, սպասողական, ինչիսկ ճգնաժամային դրութեան մէջ: Առաւօտեան վաղ իր սարսափի մէջ նա տեսել էր իր անկումը, իսկ այժմ իր ամենազուարթ տրամադրութեան մէջ լսում էր իր անկման մաւին: Եւ այդ ասողը մի կին էր, որ իրան աստուած էր կոչում: Միւսին: Եւ այդ ասողը մի կնոջ մեծ-մարգարէն, որ մտել է ժողովրդի թէ՛ աստուած ինքը չէ կամ մեծ-մարգարէն, որ մտել է ժողովրդի լաւ դատմաների մէջ ու նրանց ըմբոստացրել իր դէմ: Վերջին մոտ-

ծութիւնը աւելի մեծ հիասթափում ու յուսահատութիւն առթեց թուրքիայի տիրոջը, որ սարսափում էր արդէն ամէն մի տերեւի շարժումից: Նա որոշեց կրկին և կրկին անգամ խօսել իր գուշակովի հետ և մի որոշ եղբակացուքեան գտնով լսող այնմ կարգադրել Սաբիրէի պատիժը: Արդիւլ-Համիտ զգաց, որ ինքը կանգնած է մի մեծ ոյժի հանդէպ, որի առաջ անպայման պիտի խորտակւի մի օր:

Սաբիրէին առաջնորդեցին պալատական գնտանը, մի սենեակ, որի դրան առաջ իրան տուած զօրականներից մէկը ծռենկ չոքեց իր առաջ, համբուրեց փէշը ու ասաց.

— Հանրմ-էֆէնտի'... ինձ էլ ազատի՛ր իմ ներկայ ստրկութիւնից... հրամայի՛ր ինչ որ ուզում ես, ևս կատարեմ...

Զօրականի ձայնը դողում էր: Սաբիրէն նրան կանգնեցրեց ու ասաց.

— Ատի՛ր քո սուլթանին և ջանա՛ խորտակել նրա ոյժը:

— Երդւում եմ սուրբ Ղուրանով և մարգարէի սուրբ դրօշակով:

— Ապրի՛ս:

Սաբիրէն մտաւ մի խաւար սենեակ, ուր շատ ազատ լոյս էր թափանցում մի փոքրիկ ծակից և մինչ խարխալելով առաջ էր դնում, յանկարծ լսեց մի ծանօթ ու քաղցր ձայն:

— Մօրաքոյր Սաբիրէ՛...

Նայիլ-բէյի կինը ճանաչեց ձայնը, որի աէրը մօտեցաւ իրան ու փաթաթուելով իր վզին կրկնեց մի քանի անգամ.

— Մօրաքոյր Սաբիրէ, մօրաքոյր Սաբիրէ...

— Դու էլ ե՛ս այստեղ, Սննիսա՛, հարցրեց Սաբիրէն իր հերթին նրան գրկել ու համբուրելով:

— Կէս ժամ առաջ եկայ: Երեք օր է, որ ես էլ եմ ձերբակալուած, ինձ մատնողն էլ մայրս է եղել...

— Մէլէ՛կը...

— Այո՛, նա՛...

Եւ մանկամարդ աղջիկը սկսեց արտասուել:

— Մի՛ լար, գառնուկս, մի՛ լար:

— Ա՛խ, մօրաքոյր, մօրաքո՛յր... չկարծես, թէ ես մահից կամ չարչարանքից եմ վախենում ու դրա համար եմ լացում, ո՛չ, Աստուած վկայ, ո՛չ... եթէ ես լացում եմ, դրա պատճառը այն է, որ մենք յաղթուեցինք և փոխանակ մեր նմաններին օգուտ տալու, նրանց կոտորածի պատճառ դարձանք: Ես աչքերովս տեսայ, թէ ինչպէս Դիւան-Եօլուի վրայ զօրքն ու խուժանը միացած սպանում էին պատահած հային... սարսափելի է մտածելն իսկ... ուր մնաց տեսնելը...


Եւ մանկամարդ աղջիկը գլուխը դրաւ Սաբիրէի կրծքի վրայ ու սկսեց հեծկլտալ: Սաբիրէն հանդարտ ու մէկին արտասանեց.

— Կանցնին օրեր, տարիներ, Սննիսա՛, կը փչեն հողմերն ու քամիներ, կը խորտակին բռնապետութիւնները, ազատ կը չնչեն բռնաբարուածները և Կարմիր Գազանի այս որջը, որ շատերի գերեզմանն է եղել, մի օր կը դառնայ շատերի հետաքրքրութեան առարկան ու շատերի բաղդաւորութեան պատճառ... կընկնի Գազանը... Սննիսա՛... կընկնեն բոլոր գազանները...

Եւ զնդանային խաւարի մէջ երկու կանանց, երկու հրեշտակների շրթները իրար մօտեցան, երկուսի բաղունները իրար գրկեցին և երկուսի սրտերն էլ սկսեցին բարախել երջանկութեան անհուն զգացումով:



Վ Ե Ր Ջ



ՀՀ Ազգային գրադարան



NL0363403

56.792

